

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՈՆԱԿԱՆ, ԱԳԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԻՆ-ԽՄՐԱԳԻՐ

ՃԱՐՄԱՅԻ ՔԱՋԱՆՈՅ ԿԵՁԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 26 ՅՈՒՆԻՍ 1910

ԹԻ 13

“ՏԱՃԱՐ”

ՊԵՏԱՆՆԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու
Գաւառաց » »	40 »
Արսասահմանի համար տարեկան	40 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարայ

Բաժանորդացիները կ'ընխիկեն

“ՏԱՃԱՐ”-ի թիւ՝ ժողովական և թիւ՝ խմբադրական գործերուն համար պէտք է զինկէ առ
Զարմայր Քանանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պէճիքսը, Հալոյ եկեղեցի,

درسمانده بشکطاشده ارفى کليسا-ند « داجار » غزه-سى مدبرى بياى زارماير

Rev. Père Zarmaïr Guézourian Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԵՍ ՇԻՇՄԱՆԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի, Շէրէֆ փողոց, բիւ 33

ԽՄԻԱԳՐԱԿԱՆ ՍՍՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիբայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմեան
5. Տ. Հմայեակ Բհնյ. Էքեքեան
6. Տ. Արիստակէս Բհնյ. Հիսոյեան
7. Տ. Զայրմայր Բհնյ. Կէղիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՍՍՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բհնյ. Էքեքեան
3. Տ. Խորէն Բհնյ. Երուսթիւնեան
4. Տ. Սաքիս Բհնյ. Պսլլքեան
5. Տ. Պօլոս Բհնյ. Պէյաղեան
6. Տ. Սորէն Բհնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բհնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բհնյ. Ճէղէնեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԲ

« ՏԱՃԱՐ » ԿՐՕՆ ԹԵՐԹԻ

- ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
 ԱՂԵՐՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գարիկեան
 ԱՍԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պօլոս Վրդ. Դաթիսեան
 ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ. Պալարան
 ԱՅԻՕՆ ԳՐԱՐԱԶԻՍԱՐ. — Տ. Խաչատուր Ա. Բհնյ. Զօնէիան
 ԲԱՆԵՐԻ. — Մ. Սանտեան Էֆ.
 ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բաղէն Ծ. Վրդ. Կիլիկեան
 ԴԱՐԻՔ. — Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աշաւուհի
 ԵԴԵՍԻԱ. — Բ. Թիւրքեան Էֆ.
 ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ. Դիւարեան
 ԵՐԶՆԿԱ. — Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրմաշեան
 ԵՒԴՈԿԻԱ. — Առաջն. Տեղապար Տ. Սրատաղ Վրդ. Դալէնիւրեան
 ԶՄԻՐՆԻԱ. — Տ. Զարուիլին Բհնյ. Տ. Սաղիկեան
 ԷՍԿԻՇԷՆԻՐ. — Տ. Դաւուտ Բհնյ. Տ. Գալուստեան
 ԽՍՐԲԵՐԻ. — Առաջն. Տեղապար Տ. Դէորդ Ծ. Վրդ. Աւանեան
 ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Մարտ Ծ. Վրդ. Ստաւէթեան
 ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս Էֆ. Թարգման
 ԿԻՒՄԻԻԸԻՆԷ. — Տ. Դերսէս Բհնյ. Նշանեան
 ՀԱՆԷՊ. — Բաղն. Տեղապար Տ. Զահլ Վրդ. Դասարեան
 ՄԱՆՁԻՍԹՐ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ա. Եպիսկ. Իւթիւնեան
 ՄՍՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարմապեան
 ՄՍՐԶՈՒԱՆ. — Յակոբ Էֆ. Սրատեան
 ՆԻԿՈՒՐԻԱ. — Տ. Ռեհի Բհնյ. Պիպիեան ԶԻԷԶԵՕ. Յակոբ Էֆ. Նշանեան

- ՆՈՐ ԶՈՒՂԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Բաղարատ Վրդ. Վարդապետեան
 Շ. ԳՐԱՆԻՍՍՐ. — Տ. Նաթան Բհնյ. Տաւեան
 ՈՒՇԱԲ. — Կարապետ Էֆ. Բէհեանեան
 ՊԱՆՏՐՍՍ ՊԱՆԲԷՍԻ. — Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մաղլաբեան
 ՊԱՂԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա. Եպիսկ. Կէսմիւրեան
 ՊԱՅՐԱ. — Կարապետ Էֆ. Բէրթմէնեան
 ՊԱՐՏԻԶԱԿ. — Եովնանէս Էֆ. Տ. Կապալեան
 ՊԷՐՈՒԹ. — Զոհար Տեառն Տ. Եղեկիլ Վրդ.
 ՊՈՒՐԻՇ. — Դաւարտ Էֆ. Կանիկեան
 ՊՐՈՒՍՍ. — Առաջնորդ Տ. Յովնանէս Ա. Եպիսկ. Արշարունի
 ՌՈՒՍՃՈՒԲ. — Տ. Սկրտիչ Բհնյ. Մըլնիկեան
 ՌՍՈՍԴՕ. — Առաջն. Փոխանորդ Տ. Իսիդոր Բհնյ. Թարձեան
 ՍԱՍՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վրդ. Օտարաշեան
 ՍԵԲԱՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Թէոփիլ Բհնյ. Օտարաշեան
 ՍԵՂԱՆԻԿ. — Զոհար Տեառն Տ. Կարապետ Բհնյ. Թոխանեան
 ՍՕՅԻԱ. — Տ. Մարտ Բհնյ. Տ. Մարտապեան
 ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրէդեան
 ՏԷԻ ԱՂԱՇ. — Տ. Գարեգին Բհնյ. Տէպլէթեան
 ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դուրի Էֆ. Մովսէսեան
 ՏԻՄԷՐՕԳԱ. — Տ. Գէորգ Բհնյ. Թէրգեան
 ՏՓՂԻԱ. — Հ. Առաքելեան
 ՓԱՐԻՉ. — Զոհար Տեառն Տ. Վառմապար Բհնյ. Դիւարեան
 ՔԷՍՍԹԷՆԷ. — Տ. Մաթիէոս Բհնյ. Մանիկեան
 ՔՂԻ. — Առաջն. Տեղապար Տ. Պսակ Վրդ.
 ՅԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան

ՏԱՋԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
Կրօնական, Ազգային, Գրական

Ա. ՏԱՐԻ

26 ՅՈՒՆԻՍ 1910

ԹԻԻ 13



ՄՄԵՆ. Տ. ԵՂԻՇԷ ՍԻՐԱԶՄԵՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՓՈՍ ԴՈՒՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԲԻՈՅ

ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿ Ա. ՊԱՏՐԻԱՐԺ ՀՕՐ

ԵՂԻՄԵ ԵՍՏԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՆՈՐՀԻԿՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔ ԱԶԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅԹՈՑ ԹՈՒՐԻՔԻՈՅ, ԳԵՐԱՊՈԼԻՏԱՆԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԻԱՆ ԿՈՊՐՈՍԱՅ, ԵՍԿԻՍԿՈՊՈՍԱՅ, ԲԵԼԵՆԱԿԱՆ ԱՍՍՉՆՈՐԴԱՅ, ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊՈՏԱՅ և ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ՓՈԽՈՆՈՐԴԱՅ, ՎԱՆԱՀԱՐԵՅ և ՔԱՐՏՈՂՇԱՅ, ԲԱՐՍԻԼՈՆ ԱՆՈՂԵՐԻՑԱՆԵՅ, ՔԱՀԱՆԱՅԻՅ, ՍԱՐԿԻՍԱՊԵՅ և ՂԱՐՎԱՅ, ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԱՆՂԱՄՈՅ ԳԱՆԱԲԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՐ, ԿՐՈՆԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ և ՏԵՍՏԵՆՆԱՐԿՈՅ, ԲԱՐՍԻԼՈՆ ԹԱՂԱԿԱՆԱՅ, ՀՈՂԱՐԱՐՃՈՒԹԵԱՆԵՅ, ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹԵԱՆԵՅ ԳԱՏԻՔԱՐԱԿԱՅ՝ ՈՒՍՈՆԵՅ և ՈՒՍՈՆԵՅԱՅ, ԿՐԹԱԿԱՆ և ՔԱՐԵԴՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԵՅ և ՀԱՄԱՐԷՆ ՀԱՆՈՒՄԱՅԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ Ի ՏԷՐ ՄԵՐ, ԱՐՈՆԵՅ և ԿԱՆԱՆԵՅ, ԾԵՐՈՅ և ՍՈՐՈՅ, ԵՐԽՈՒՄԱՐԴԱՅ և ԿՈՆՍՏԱՆԱՅ ՈՂՃՈՆՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ:

Ենորհք, Սէր, Խաղաղութիւն և Ողորմութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ բազմոցի ի ձեզ ամենեւին, ի հարազատ որդիս Առաքելական Ուղղափառ Ա. Եկեղեցւոյ, Հայրատանեաց Հիմնեւոյ և Հաստատեւոյ ի ձեռն Սրբոց Առաքելոցն Բազիլոսի և Բարթոլոմէոսի և Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, պայծառացելոյ յաւուրս Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակոյ և Մեսրոպոյ, և ամրացելոյ արեամբ հաւատակացն մերոց Հնոց և Նորոց՝ յայտից և անյայտից մինչև ցմեր ժամանակս:

Կ. Պոլսի Պատրիարքութեան պաշտօնին ու պարտականութեանց կոչուելիս անմիջապէս յետոյ թէպէտ հա՛րկ էր՝ ըստ սովորութեան՝ զրոյժ օրհնութեան և յորդորանայ կարեւորն ու օգտակարը յիշեցնել պատրիարքարանիս իրաւասութեան հերքելու զա՛ռազ մեր սիրելի

հօտին, սակայն ինչ ինչ պատճառներով՝ որոնց նկատմամբ տեղւոյդ է խօսիլ՝ յապովեցաւ այն: Տարուան մը պաշտօնափարս ինձանս փորձը՝ որ բազմացաւ արդիւ՛ աւորութիւնը չունեցաւ՝ կրնար ինքնին ստեղծանք մը ըլլալ սովորութեանս մասին, և հետեւաբար լուեկայն հրաւիր մը խաղառ հեռանալու պատրիարքական աթոռէն, աւելայն ստանձնած լուծիս ու կատարած ուխտիս հանդէպ պատասխանատու մնալու բարոյական կորովս զիս չսպառնաւ, ու միւս կողմէն պատուական ժողովուրդին դոյզն համարանքն ու նուազագոյն անկեղաթիւնն անգամ զուրգուրանքով մը արգիւնաւորելու հարկադրուած՝ կը շարունակեմ ինձի յանձնուած գործը՝ որ կարողութենէս վեր է: Եւ որովհետեւ ինչպէս Ազգային ու Վարչական Ժողովներու և Տեսուչ Սորհորդներու, նոյնպէս և հանրութեան թանկագին աջակցութիւնը պատրիարքական ծանր հոգերու թեթեւցում մը կրնայ առթել մեծ մասամբ և մանաւանդ Պատրիարքարանի պատկառանքը բարեբար տղեկցութեան մը փոխարինել՝ անոր վիճակը բարեւաւելու հայեցակէտով, պարտք համարեցոյ այս քանի մը խօսքն ուղղել, լաղաչելով զձեզ, եղբարք, անապ բանիս միտթաւութեան» (Երր. ԺԳ. 22):

Ծշմարտութիւն մըն է թէ մեր ժողովուրդը որ հինաւուրց պատմութեան էջերուն վրայ տեղ մը դրուած, ու տօնական քաղաքակրթութեան մէջ կարեւոր բաժին մը ունեցած է ու տակաւին կ'աղբի այսօր, զայնութեան այդ իրաւունքը պահած է անչափ տանձաւորման զոհարելութիւններով, որոնք իր ինքնութիւնը կը կաղմեն Պատմութեան վկայութիւնը Հայ Ժողովուրդի հա՛տն անհերքելի է: Երկար զտրերուն ընթացքին՝ մերթ յաճող և մերթ ձախող

պատահարներու բաղմամբ չըջաննե-
ն երէ անցներով հանդերձ՝ ազգային տմ-
բոյջութիւն մը կրցած է ան կազմել իր
մէջ Փրկչական թափանէն շատ առաջ:
Բայ իր առանգութեանց՝ իր հոգին ու
միշտականներուն՝ իր լեզուին ու սովոր-
թոյթներուն ազնուօրէն կապուած այդ
ժողովուրդը՝ երկու հօր քաղաքականու-
թեանց արիւնհակ մրցումներէն ընդստ-
նաւած՝ քրիստոնէութեան առաջին դա-
րերուն՝ իր գոյւթեան սպառնացող
փառք մը պիտի կրէր տաշտովապէս ու
պիտի չկրնար իր ճակատագրին տէր
կանդնիլ, եթէ Քրիստոնէութիւնը Հայաս-
տանեայց եկեղեցւոյ նորոգ կազմակեր-
պութեան հիմը վերտախն չամբարնդէր
մեր մէջ՝ ողորմութեամբն Աստուծոյ:
Անգոր ու անհաստատ քաղաքական իշ-
խանութիւնէ մը աւելի՝ որ ա՛լ չէր կրնար
Հայ ժողովուրդին խաղաղ ու բնական
բարգաւաճումը ապահովել, քաջատես և
տրի՝ հայրենասէր ու սուրբ անձնաւորու-
թեանց շնորհիւ Քրիստոնէական եկեղե-
ցին իրբեւ պարիսպ և ամրութիւն ծա-
ռայելով մեղի՝ քաջբոյութի եկեղեցւոյ
մեծ գանդուածի մը մասերը հոգեկան
միութեամբ պահպանեց իր անկախ հո-
վանաւորութեան ներքեւ:

Փրկչական թափանի Դ. դարուն
սկիզբներէն մինչեւ ցայսօր մեր եկեղե-
ցին կառարած այս փրկարար վերը
դաւանութեան մը չափ անխախտ հաւա-
տաւ՝ ք մը եղած է ամեն Հոյս համար,
և այս խորունկ համազումովն է որ մեր
ժողովուրդը Զերմեանդութեամբ սիրած
և յարգած է իր մայրենի եկեղեցին, ո՛չ
միայն իր սատուածոյն խորան և հաս-
տատութիւն, այլ և իր սրբաբայր՝ զոր
նուիրագործած է իր խոյ զոհերուն ար-
իւնովը իր սպասէն՝ որու ծոցին մէջ
ապաստանած՝ պղտոր հրապոյրներու և
և լոնաւոր պահանջումներու զէմ չէ՝ զի-
ջած առեւեառիկ վաճառքի մը պէս փո-
խանակել իր գոյութեան տարրերը, վեր-
ջապէս իր սպասի մը յոյսի և միութե-
անութեան, ուսկից երբեք չէ պահած իր
կենդանութեան ջուրն ու զարմար իր

ցաւերուն: Այս՝, կր սիրենք մեր մայրենի
եկեղեցին, ու մեր մայրը կը կոչենք զայն,
ո՛չ թէ՝ հասարակօրէն ընդունաւած բա-
տրութեան մը համաձայն, այլ մանա-
ւանդ որ անժառանգաւած իր գաւազնե-
րուն ծնելատէր գիրկն եղաւ ան, ու
անոյ գանձք իր առաջ վարդապետու-
թիւններովն ու անվատ ներշնչումե-
րովը չղաղբեցաւ երբեք տնոյ տրվե-
ցնելէ իր սատուածոյն Հիմնադրին գե-
րագոյն բարոյականը, անձնուէր սոյն,
ներողամիտ քաղաքութիւնը, կատարելու-
թեան սէրը, արդարութեան գիտակցու-
թիւնը, անկաշկանդ մտածութիւնը,
հուժկու անհատականութիւնը, շարժա-
րանքի խտմբերութիւնն ու փառք
յաղթանակին Պէտք է խոստովանիլ, սա-
կայն, որ քրիստոնէական առաքինու-
թեանց այդ սերմերը դառն ժամանակ-
ներու և տիւր գանդաւորութիւններու
հեռեւանք՝ երով՝ իրենց յաջորդական
տնումն ու պողտրերումը չեն արգիւնա-
ւորած, ու կանուխն միայն ձեռք բեր-
ուած բարիքներու շնորհիւ է որ մեր
հոգեւոր պաշարը չէ սպառած բնաւ մեր
չափաբաններուն մէջէն: Մեր Ս. եկե-
ղեցւոյ՝ պաշտպան թեւերուն տակ՝ որ
մեր մոտ որ ու բարոյական զորքացման
նպատակով է որոշ չափով՝ ի նուէն ծաղ-
կեցան դպրոցներ և դպրեմանքեր,
կանդնեցան մարգարտական հաստատու-
թիւններ, և Ե. դարուն մէջ տեղի ու-
նեցաւ կրօնական վերադանց զարթոնքի
մը նախաձեռնութեամբ, և որ յաւերժա-
կան երաշխիքն ունեցանք մեր լեզուին
և գրականութեան, մեր հաւատքին ու
պատմութեան: Ահա՛ յայտնի պատճառ-
ներ՝ դարուց ի դարս երախտապարտ
մնալու մեր Ազգային եկեղեցւոյն հան-
գէտ, որ նախական պարտք կը դնէ
մեր ամենուս փրայ իր սէրը վաւ պահե-
լու մեր մէջ. յայց առաւելապէս առ
այդ պատասխանատուութեան մեծագոյն
բաժինը կը յատկացնէ իր եկեղեցական
պաշտօնեաներուն: Հոգեւոր շնորհարաշ-
խութեամբ՝ եպիսկոպոսութեան, երի-
ցաթեան և սարկաւապոսութեան նոյ՛ խոյ

դպրութեան աստիճաններուն բարձրացած պաշտօնեաները կը պարտին հաւատարիմ մնալ իրնց կոչումին։ Իրենց բովանդակ գործունէութեան նպատակը պէտք է ըլլայ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ փառաւորումը և բարեկարգ ու գլուխը լա՛ւ իմացում կրօնական ըմբռնումներով։ Պահանջուած տարրական պարտականութիւններ անգամ ինքնին գրաւականն են անոր պատուոյն ու մեծութեանը։ Եթէ վիճակ է՝ որ կը յանձնուի Եպիսկոպոսին կամ Առաջնորդին, ներքի չէ՝ որ իր հովուութեան պաշտօնը կատարէ նա «իրեւ տիրելով վիճակացն»։ Եթէ ժողովուրդ է՝ որ յանձնուած է քահանային, ներքի չէ՝ որ նա իր վերականգնութիւնն ի դորձ դնէ «զօջաքաղութեամբ»։ Եթէ սեղան է որ յանձնուած է սարկաւաղին, ներքի չէ՝ որ սպասարկէ «ակամայ»։ Եւ ամենքս ալ հաւասարապէս պարտաւոր ենք «լինել օրինակ հօտին Աստուծոյ» (Ա. Պետր. Ե. 2-3), և «զգործ աւետարանչի գործելով» հանդարտութեամբ խրատելու, երկայնմտութեամբ մխիթարելու մեր ընկերը։ Դպիրք անգամ որոնց պաշտօնն է «սաղմոսիւք և օրհնութեամբ և երգովք հոգեւորօք» նուագել Տիրոջ տաճարին մէջ՝ հա՛րկ է որ կատարին իւրեանց «սիրտըս իւրեանց» (Եփես. Ե. 19)։ Այս ամէնը «վասն շինածոյ Եկեղեցւոյն» է, զոր ո՛չ փայտակերտ աղօթարանի և ո՛չ քարաշէն տաճարի նիւթական նշանակութեամբը կ'իմանանք, այլ կ'ըմբռնենք մանաւանդ այն Եկեղեցին՝ որ «սեպհական ժողովուրդ» է թարգմանութիւն և որու շինութիւնն ու սրբութիւնը կ'ապահովուի՝ բարոյական բարձրութեամբ և քրիստոնէական ողջախոհութեամբ հիմնարկուած ընտանեկան յարկերով։ Ընտանիքներն են որ կը կազմեն մեր «սեպհական ժողովուրդը»։ անոնցմով կը ձևանայ ու կը պահպանուի աղգայնութեան ոգին, անոնց մէջ կը մտնուորուի նոր սերունդին հօրամօցն նկարագրիւր։ Անոնց մով ձագախառն կ'երամանայ Եկեղեցին՝ զոր Գրիստոս սիրեց և որուն գոհեց իր

անձը՝ փրկագործելու համար զայն, սուրբ և անարատ վերածնունդով մը։ Ըստ այսմ և ընտանեկան ամուլին փոխադարձ սէրն ու հաւատարմութիւնը՝ առաջնական վարդապետութեան համաձայն՝ Գրիստոսի և Եկեղեցւոյն հոգեւոր միութեան մեծ խորհրդին շօշափելի օրինակն համարուեցաւ, և իբրեւ այն՝ ստացաւ իր մէջ իր իրական արժէքը։ Եւ արդարեւ, ինչ կրնայ արժիւ ընտանիք մը ուր «այրը իր կնոջ գլուխը» (Եփես. Ե. 23) չէ, կամ՝ որովհետեւ հեռացած է անկէ ու լքած է զանի, կամ՝ որովհետեւ գլուխ ըլլալու խմտութիւնը կը պակսի իրեն։ Այսպիսի անկարգ լծակցութենէ և անառակ յօժարութիւններէ ծնունդ առնող աններդաշնակութիւններ վերջապէս էր վտանգե՛ն այն կասը՝ որ երջանիկ միութեան մը կ'իքը պիտի պահէր անաղարտ։ Միւս կողմէն՝ նոյնն է՝ աղէտքը ընտանիքին համար՝ երբ կիներ հնազանդութեան հարկը չհատարեն իր էրկան, դրժելով այն հանգիստ որ խոտուածի՝ զոր ըրած է Աստուծոյ և մարդոց առջեւ։ չի՛մանար թէ հեղ ու հանդարտ հոգիի մը անեղծ վարդերովը միայն կրնայ դեղեցկացնել իր ներքին մարդը (Ա. Պետ. Գ. 4), և իր ասոր մէջ ո՛չ տատուածողաշտութեան անուշահոտութիւնը կ'զգացուի, և ո՛չ ալ «ծուծութիւնը բարի գործի մը կամ բարի խորհարգներու»։ Երբ իր ճակատագրին անարժան ընտանիք մը չարաչար խղովմիներով կամ պաշտօնա՛ն ամուսնալուծութիւններով կը քայքայուի՝ Եկեղեցւոյ անդամակցութեան շնորհն ու առաւելութիւններն ալ կ'անհետան անկէ, ու մանկութեան հասակի բողբոջները չեն ծաղկիր իր բարոյական հիւթը կորուսած ուտի մը վրայ։ Եկեղեցին և աղգը պէ՛տք ունին մաքուր, միաշունչ և համամիտ ընտանեկան կազմութիւններու, ուր Աստուծոյ օրհնութեամբ «կեանքի շնորհներուն ժառանգակից» զոյգերը սրբագործուին, ուր այրը արարպէս հայրն ըլլայ կիրթ ու շնորհալի զաւակներու, ուր մինչեւ ջմահ Ա. Պատիկ վայելչութիւնն յաւերժանայ սիրահարուստ ոգեխառնու-

մով, և ուր ծնողական հոգին ու խնամքը անուցանէ փոքրիկները մանուսեղ «ուսմամբ և խրատու Տեառն» (Եփես. Զ. 4): Քրիստոնէական սիրով ուսնացած հայ ընտանիքն է որ սղգին գոյութեանը սատարող ոյժ մը՝ կ'ընձեռէ իրմով, և իր ծոցէն թղթող անխարդախ կաթին հետ կը ջամբէ նաեւ նոր սերունդին հոգեկան զարգացումը:

Ոյդ նոր սերունդին համար՝ հարկ չկայ ըսելու թէ՛ նոյնքան անհրաժեշտ է նաեւ միտքի զարգացումը՝ սոհմայէն կրթութեամբ նպաստաւորուած, և մեր դպրոցներն ալ՝ որոնք մեր ընտանեկան յարկերուն շարունակութիւնը պէտք է ըլլան իրենց ամէն մէկ աստիճանաւորումներովը, իրրեւ հայեցի Հաստատութիւններ՝ հա՛րկ է ո՛ր իսկապէս գոհացում տան մեր կրթական պէտքերուն՝ Հայ համայնքին պատկանող մանուկը մանկապարտէզէն սկսելով պէտք ունի իրրեւ հայ դաստիարակուելու, իր գիտակցութեան առաջին վայրկեանէն հոգարտ զգալով ինքզինքը, ըստ որում զաւակն է այն ժողովուրդին՝ որ գարաւոր մաքառումներէ և նահապաղութիւններէ դուրս կուգայ «չարչարուած՝ բայց ո՛չ մեռած, օրհասական՝ և ուհա կենդանի», Մեզի յատուկ կրթութեան գործը կարօտ է մեծ գոհողութիւններու, և Պոլսի կամ քանի մը գաւառական կեդրոններու մէջ ազգային և մասնաւոր դպրոցներու շնորհիւ ձեռք բերուած գնահատելի արդիւնքները անբաւական են ըստ ինքեան, քանի որ ներքին դաւառներու մէջ՝ ուր կը պակսին կենսական ա՛յնքան պէտքեր՝ կը պակսին նաեւ ամենատարրական դաստիարակութեան մը բարիքը, ծանօթ վայրերու և անձանօթ անկիւններու ընդարձակ տարածութեան վրայ: Կրթական մեծ ու փոքր ընկերութիւններու հոգածութիւններն այդ մասին՝ առարկայ ըլլալով ընդհանուր համաիրանքի՝ արժանի՛ են նաեւ գործնական քաջալերութեան, և մեր իւրաքանչիւրին պարտքն է օժանդակել այդ վսեմ ձեռնարկներուն, ընդհանրացնելու համար միաբերու մա-

կարդակին բարձրացումը՝ տառնց որոյ փափաքուած յառաջդիմութեան անընդունակ կը մնայ ո՛ր և է ժողովուրդ: Առանց ուրանալու եւ բոլորական Հաստատութեանց յանուն կրթութեան մատուցած ծառայութիւնը մեր մէջ՝ հա՛րկ է չմոռնալ որ՝ առհմասիրական և մանկավարժական սկզբունքներու համաձայն՝ մայրենի լեզուն պէտք է խարխիւն ըլլայ մեր նախակրթութեան, և այդ ուղղութեանէն ո՛ր և է շեղում օգտակար չէ աղբին: Լեզուներու կարգին մէջ՝ որոնց ուսուցումը աղղակն է մեր զտրգացումին՝ իրրեւ անկեղծ Օսմանցիներ կը պարտինք կարեւորաբայն տեղը տալ Օսմաներէնի, և ա՛յնպէս պատրաստել Հայ ուսանողները, որ եթէ յարմարութիւն և բախտ ունենան՝ բաց գտնեն իրենց առջեւ պետական դպրոցներն ու համալսարանները, և լաւագոյն մշակութեան մը տիրանալով կարենան ծառայել ազգին՝ որու կը վերաբերին, և Սահմանադրական պետութեան՝ որուն կը հպատակին, Դպրոցներն ուրիմն՝ իրենց կանոնաւոր կարգապահութեամբը՝ կրթական գործնարդիւնաւորելով՝ պաշտօն ունին նաեւ պատրաստելու բուն քաղաքացին, խաբանչիւր ուսանողի մէջ արթնցնելով լուրջ ու գիտակից կոչումը քաղաքացիութեան, որ կը կայանայ ազգային ու պետական օրէնքներու պատկառ կենալու և հրամայուած պարտականութիւնները կատարելու սուրբինութեան մէջ: Հարկ կա՞յ արդեօք յիշեցնելու թէ՛ ո՛րչափ պէտք ունինք աշխարհիկ կրթութեան ընդհանրապէս, նո՛յնչափ և պէտք ունինք ի մասնաւորի կրօնական կրթութեան, նախանձաւոր ըլլալու եկեղեցական պաշտօնեաներո ն'ատմամբ, որոնց յանձնուած պաշտօնը նուիրական է արդարեւ, ուստի և անհրաժեշտ է ժառանգաւորաց վարժարաններու կամ ընծայարաններու հաստատմանն ու զարգացմանը հետամուտ ըլլալ յարմարաւոր կեդրոններու մէջ, պատրաստելու համար ժողովրդասէր, լուսամիտ, պարտաճանաչ և անձնուէր հովիւներ, որոնց թիւը չա՛տ ցանցառ է

գլխադարար։ Ազգային ման'տոյն դաս-
տիարակութեան հոգն ստանձնող մեր
հոգեւոր եղբայրներէն ուսուցչական և
կրթական մարմիններէն մեծ փառահա-
թեամբ կ'սպասենք թէ՛ Հայ 'կեղեցիին
և թէ՛ Օսմ. Հայրենիքին մատուցուելիք
այս գնահատելի ծառայութիւնը։

Հայոց մարմարեղբ' իրեն յատուկ
շնորհակի մը մէջ ամփոփուած ու կըր-
թուած իր բնիքն ունի, ո'չ օտար իր
եկեղեցական կազմակերպութենէն։ Սոք
օրէնքը ճիշդ կէս դար առաջ Օսմ. Պե-
տութեան փաւրացմամբ հաւատարմ
Ազգային Սահմանադրութիւնն է, որ
Օսմ. Սահմանադրութեան վերահաստա-
տումի ու գործադրութեան շնորհիւ
կազմուեալ ըր ըր արայական գորու-
թեանը մէջ՝ կ'երաշխաւորէ ըստ առաջ-
նոյն մեր ազգային-եկեղեցական իշխա-
նութեան ու սահմային կրթութեան
իրաւունքներու անբռնադարելիութիւնը։
Սահմանելով ընդհանուր և վարչական փո-
ղովներու և անոնց բոլոր ճիւղերուն իրա-
ւասութիւնները և գործաւնութիւնները,
օրինական կալուածի մը վրայ Տրուած
ըլլալով այս ամէնը՝ իրաքանչիւր Հայ
անհատ, իրեւ հարազատ զաւակ Հա-
յաստանեայց, հապէս կ'ցորդուած իր հա-
մազդիններուն՝ ազգային սպասականու-
թիւններ ու իր ինչպէս նաեւ իրաւունք-
ներ՝ ընտրող և ընտրելի ըլլալու հանգ-
մանքներով, սոյնպիսի պաշտօններու վե-
րաբերմամբ, որոնց կատարումը կը պար-
տադրուի յանուն ժողովուրդին։ Ազգային
իշխանութիւնը՝ որ Սահմանադրութենէն
բղիտող հեղինակութիւն մըն է, նախան-
ձախնդիր է օրէնքին պատշաճ գործա-
դրութեանը, թոյլ չտալով միանգամայն
որ ազգային-եկեղեցական իրաւունքնե-
րուն դէմ ռանձգութիւններ տեղի ունե-
նան արտաքին կամ ներքին ազդեցու-
թիւններու երեսէն, որոնք կրնան ջլատել
մեր կենսական զօրութիւնը կամ խանգա-
րել ամէն կարգապահութիւն։ Յարգելով
հանդերձ ինչ որ մերն է, և ի սահմանօրէն
օգտուելով անկէ, կրնա՞նք մոռնալ եր-
բէք թէ կենդանի մասն ենք Օսմանեան

Սահմանադրական։ Պետութեան։ Եթէ
Ազգային Սահմանադրութիւնը՝ համազդի
մէկ տարրի միւր թիւնը պահպանելու գե-
րը մշտնջատ սրելով եւեթրականութիւնը
կ'ունենայ, որչափ ու երբեք չտարակաւեց
է նկատուի Օսմ. Պետութեան Սահմանադ-
րութիւնը՝ որ բազմադեզ և բազմապիւ
տարբերութեամբ հրաշալիքը էր դուր-
ծէ՝ իրր մէկ հայրենիքի գաղափրներ հա-
ւաքելով զանաք ամէնքը միեւնոյն դրօշի
և միեւնոյն հովանաւորութեան ներքեւ։
Ծառայելով սրբին Ազգին՝ իրր ազգային
անհատներ, պիտի գիտնանք լաւ ևս
ծառայել Օսմ. Սահմանադրութեան՝ իր-
բե Օսմանցիներ, վճիռ լաւ խմայում
մեր շահերը չեն կրնար ալիւս տարրերի
Պետութեան ստուգ շահերէն։ Մենք՝
Հայերս՝ վաղուց լոտեալացած ենք այս
սկսութեան, վասն զի վեց դարերու եր-
կար ժամանակամիջոցին՝ մեր նախնիք
հաւատարմարար ծառայած են երկրին
բանապետական դրութեան ներքեւ իսկ
մեծ է մեր հաւատքը Օսմ. Սահմանադ-
րական կառավարութեան ապագայի մա-
սին, որ խստամիտաց է արդէն, լուսա-
միտ կայսեր և արքարուսէր կառավարու-
թեան շնորհիւ։ Ի հարկէ ամէն ինչ
չկրնար բարե'արդական լուսողոյն միճա-
կին համիլ մէկ օրէն միտը, մանաւանդ
այն հանդամանքներուն մէջ՝ ուր կը
գտնուին Օսմ. Հայրենիքի ապական
գաւառները։ Ինչ կոյր նախադաշա-
րումներ և յոսի արտօմաններ կան գեւ-
շաղախուած անարգ միտումներու՝ սովո-
րութիւններու և շահերու հետ, և ու-
րիշ գանազան արգելքներ՝ զորս Սահմա-
նադրական կառավարութիւնը պիտի ջա-
նայ վանել ու բաւնալ հետզհետէ փա-
մանակը պիտի արգաստու որէ անշուշտ
նորածիլ սերմերը Օսմ. Սահմանադրու-
թեան՝ որուն բերած հաւատարմութեան
բարիքներէն մին կը համարինք զինու-
րութիւնը՝ իրեւ քաղաքացիական իրա-
ւունք մը։

Պատրիարք Կ. Պոլսոյ
ՍԿԻՇԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
(Մնացեալը յաջորդով)

ԱՌԱՋԻՆ

ՎԵՅՄՄՍԵԱԿԷՆ ՎԵՐՉ

ՏԱՃԱՐ՝ ՇԱՐԱՐԱԲԵՐԹ

Փոփոխութիւնները, ձեւաւորջութիւնները, թէեւ վաղանշին հետաքրքրութիւն մը տրիւնցենէ, հաստատուն հիմի մը, տեւակա՝ ութեան մը այտարար նշանը չեն։ Փոփոխական վիճակ մը՝ մասնաւորապէս պարբերական հրատարակութեան մը համար, հետո. է վստահութիւն ներշնչել։ Բայց փոփոխութիւնները երբ բարեշնչութիւն ձեւով կը ներկայանան, առաջը խնայութեան ապացոյցները կը դառնան այն առեւ, հետեւելով բնական զարգացումի ճամբուն։

Տաճարը, այսօր, այդ երկրորդ սլաքադային մէջ կը ներկայանայ ընթերցողին։ Սրտի մեծ գոհունակութեամբ կը ծանուցանենք թէ այն թերթը՝ Կիսամետայ Հանդէսի ձեւով բոլորեւէ ետքը իր առաջին վեցա՝սեան, երկրորդ վեցամետային կը թեւակոխէ՝ իրեն։

Փողովդալին Շաբաթերթ՝

Որոհական, Պզգալին եւ Գրական։

Դիտենք, երկարամեայ փորձառութեամբ, թերթի մը հրատարակման բազմադիմի դժուարութիւններն և պահանջները, և եթէ յոգարարում կ'աւելցնենք մեր աչիւններով, իրապէս օգտակար ըլլալու փափաքէն մղուած կ'ընենք ատիկա, աւելի՛ մատեն շփում ունենալու համար ժողովուրդին հետ, աւելի շատ առիթներով խօսելու համար անոր՝ Հայ կեանքին վրայ, որուն հոգին է իր Եկեղեցին, այդ բազմադարեան Հաստատութիւնը, որ իր հզօր հովանիին տակ պահել պահպանել է Հայու լեզուն, Հա-

յո. նախնական ուսնդութիւնները, տեղեւոր է Հայուն հայտնաւորականութիւնը, լուսաւորութեան ջանք մը, մոտաւոր զարգացումի հզօր աղջան մը դասնալով հին լուսարակուն գարեբու մէջ, նաեւ ազատութեան գաղափարին հզօր տխրեան մը, մինչեւ որ նոր գարեբու մէջ աշխարհական միաբն ծլեր, բարոջեր է գրականութեան անդամատաններուն մէջ, նպատատ որուելով նախընթաց գարեբու մատենագրութեան հայտնաւորականութիւնը։

Բայց օգտակար դառնալու հեր իւր ծանրագործելի երազ մը պիտի մնար, եթէ չըլլար տար համակրութիւնը, որ թերթի մասնաւորապէս երկրորդ եռամետակի շրջանին յայտնուեցաւ մեզ, գաւառի նոյ՛ իսկ ամենէն հեռուոր անկիւններէն, և Եւրոպայի, Ամերիկայի, նաեւ Եգիպտոսի պատուական Հայ գաղութներէն հաւատարապէս։ Տաճարի դատած մեծ ընդունելութիւնը, և ժողովրդականութիւնը զոր սկիած է ստանալ հետզհետէ Պոլիսի մէջ և մանաւանդ Պոլիսէն դուրս, անխառն ուրախութիւն կը պատճառէ մեզի, ոչ միայն անոր համար որ այն թերթին կը վիճակի տեւականութիւն ունենալ ազատութեան հռչակումէն ի վեր սուսկի նման բուսնող բայց մեծ մասամբ վարդի մը կեանքը միայն ունեցող բազմաթիւ թերթերու մէջ, այլ անոր համար մանաւանդ որ բացառապէս կը ցոլացնէ միտքարարական երեւոյթ մը, — լրջամիտ Հայուն ջերմ կրօնասիրութիւնը, պաշտանքը զոր ունի Հայը իր լոյս հաւատքին, իր բազմաշարժար Եկեղեցիին վրայ, հակառակ անոր ուղղուած տնդիտակից հարուածներուն։

Շնորհակալութիւն, ուրեմն, այն բազմաթիւ համակրողներուն, որ իրենց

քաջալերա՛ն խօսքերսփռու գործնական
օժանդակութեամբ այս քաղցր միութեա-
րութիւնն ընծայեցին մեզ, միեւնոյն
ատեն վստահութիւն ներշնչելով աւելի
հռանգով փարեցու սկսուած գործին,
նոր քանքեր ընելու տնոր ընդարձակման
ու ծաւալման, Շնորհակալութիւն, մաս-
րաւորապէս, եկեղեցական թէ աշխար-
կան այն համակիր գրողներուն, որ իրենց
անձնուէր աշխատակցութեամբ փայլ-
տուն Տաճարին, և որոնց օժանդակու-
թիւնն ապահովուած է այսուհետեւ
ալ, ապահովուելով նաեւ եկեղեցական
թէ աշխարհական ուրիշ կարող գրողե-
անց, — նաեւ իրն գրողներու — աշ-
խատակցութիւնը:

Տաճարը, չարաթաթերթի վերածուե-
լով, առայժմ չի ի ստատնար առաջունէ
չառ աւելի նիւթ տալ, կ'իտամեայ հան-
դէսի 32 էջերուն կէսը միայն — 16 երես —
պիտի ըլլայ իր սովորական պարունակու-
թիւնը, ըստ անխափան ամէն չարթու-
հրատարակուելով, առին չորս չարթա-
թերթ — 4 երես — աւելի պիտի տայ,
Ասկէ զատ այժմէն իսկ ի վիճակի էր
գտնուի կարեւոր նիւթերու առատու-
թեան պարագային, յաւելուածական էջեր
դնելու, ինչպէս ներկայ թիւը որ 24 երես
կը հրատարակուի փոխանակ 16ի: Միւս
կողմէ, վարչական-մատակարարական ոչ
այնքան կանոնաւոր վիճակը աւելի
ճշգրիտ կանոնաւորութեան մը վերած-
ուած ըլլալով այժմ, պիտի կրնանք այ-
սուհետեւ աւելի հոգ տանիլ խմբագրա-
կան ճիւղին, որ կը խոտովանին թէ
զգալի թերիներ ունի տակուին: Գիտենք
թէ լիովին չենք կրցած գործադրել այն
համեստ ծրագիրը զոր գծած էինք Տա-
ճարի 7րդ թիւով (որմէ միայն կ'սկսի մեր
պատասխանատուութիւնը՝ թերթին թէ,

մատակարարութեան և թէ խմբագրու-
թեան մասին): Մարդկային գործերուն
մէջ անկարելի է հատարելութիւն գտնել,
փնտռուածը եթէ ոչ կատարելութիւն,
գոնէ լաւագոյնին ձգտումն է, ու Տաճարի
կրօնասէր, ազնիւ ընթերցողներն և ըն-
թերցողահիները կրնան վստահ ըլլալ թէ
այդ ձգտումը գերազանց աստիճանով կը
գտնուի այս տողերը գրող համեստ
աշխատաւորին քով:

ՏՆՕՒԷՆ-ԽՄԲԱԳԻՐԸ

Տաճար չարաթաթերթը՝ հակառակ
իր նոր րարեփոխումով ընձեռած առա-
ջելութիւններուն, կը մնայ բաժանորդա-
գրութեան նոյն պայմաններուն մէջ:

ՊՈԼՍՈՅ Համար տարեկան 35 դր.

ԳԱԽԱՌԱՑ » » 40 դր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆ » » 10 ֆր.

Ձեռքէ կը ծախուի հատը 40 փարա
(փոխանակ 50 փարայի):

Կը յիշեցնենք գաւառի և արտասահ-
մանի ընթերցողներուն թէ առաքումները
պէտք է ըլլան ՄԻ ՄԻԱՅՆ հետեւեալ
հասցէով. —

درسمه ابدہ بشیخکاش ارمنی کایساندہ
، داجار، غزہ سی دبیری بابا یز و مایر

Rev. Père Zarmair Guézurian
Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache
Eglise Arménienne

ՀԱՄԱԳՈՒՍԱՐԸ

Հայ Եկեղեցւոյ անկախութեան, ազատութեան ղէմ զաւել փորձողներու, Անոր պատմական փառաւոր անցեալը սոնակոխ ընելով՝ սրբազան և թանկագին յիշատակները քննել, մուցնել ջանացող անխղճներու ձեռքին մէջ տեսակ մը զէնք դարձաւ՝ վերջին երեսուն տարիներու մէջ իր զձուձ, շահախնդիր արարքներով զեղծանող ամուրի կղերներու փոքրամասնութիւն մը, ինչպէս նաեւ անուս, և իրենց կոչման անպիտակից քահանաներու հալ մը:

Աղբարե ինչէր չգործեց այդ փոքրամասնութիւնը, ինչ մասնութիւններ, ինչ կեղեքումներ, ինչէր, ինչէր:

Բռնակալութեան ամենէն սատարիկ, ամենէն արհաւիրիչ օրերուն մէջ, զեղծանողներու ղէմ զգացուած այդ ատկութիւնը, անոնց նկատմամբ պղտատայ մամուլին, մանաւանդ Բիւզանդիոնի մէջ տեսնուած քննադատականները անսարակոյս տակի սատարիկ թափով մը զուրս պիտի պտթկային, եթէ բռնի ուժով ստացուած Ազատութիւնը պահ մը մուցնել չտար մեղի ամեն բան. և հաւանքէն մարքահղթումը շատ կանուխէն պիտի սկսէր, ու թերեւս այսօր իրողութեան մը տաջեւ պիտի գտնէինք ինքզինքնիս:

Գաւազակալներու խումբ մը պատեհ ատիթին կ'սպասէր իր հակակրօն պայքարը մղելու, միմիայն փառքի, անունի և շահու նոր պատուանդան մը գտնելու համար իր պիղծ ոտքերուն տակ: Մայր տուաւ հակակղեր պայքարը: Հայ կղերը իր թէև ցանցաւ, բայց կարկառուն ղէմքերով արդէն բաւական զօրաւոր, աւելի ևս զօրացաւ: Հայաստանեայց ազատ Եկեղեցւոյ ազատ և հաւատարմ գաւազներու միութիւնովը, և այս կերպով ջանջախիչ պարտութեան մը մասնունեցաւ դաւանակալներու խմբակը որ հիմա նոր տակի մը կը սպասէ անտարակոյս:

Ասիկա բաւական չէ սակայն լուսնեղու Հայ Եկեղեցւոյ այս խորթացած գաւազները, ներքին և արտաքին թշնամիները: Մաքմտգործումը անհրաժեշտ է Հայ կղերին

մէջ. յետոյ պէտք է ի բաց վանել բարոյայն աւելորդապաշտութիւնները՝ որոնք յետսամուտ են և հակառակ Հայ Եկեղեցական վարդապետութեան:

Համագումարը՝ որուն գումարման թուականը անյայտ կը մնայ յապաւին, պիտի կրնայ բան մը ընել արմատացած աւելորդապաշտութիւններու ղէմ. Համագումարը պիտի ուզէ՞ նկատողութեան տանել ընկերական ներկայ պահանջումները: Օրինակի համար, Մկրտութեան, Հարսանիքի և Յուշարկաւորութեան կանոններու ձեւական արարողութիւնները կարծել՝ առանց զպէլու ինքնուրոյն ոգւոյն, բամեկ ժամկէտ փոփոխելը, կոկել և կարծել Ծարականի երգերը, ու այս կերպով տակի ևս սիրցնել Հայ Եկեղեցին՝ որ իր պարզութեան մէջ արդարեւ յոյժ սիրելի է և պաշտելի: Համագումարի սահմաններէն դուրս է արդեօք ամուսնալուծման օրինագրքի մը պատրաստութիւնը՝ որ ընկերական մեծագոյն պահանջումներէն մէկն է այսօր:

Մենք վստահ ենք որ Համագումարը, Հայ կղերին շահերը պաշտպանելէ աւելի, Հայ Եկեղեցւոյն փառաւորութեան պիտի նուիրէ իր ջանքերը: Համագումարը խափ, տարրերութիւն պիտի չդնէ ամուրի եւ ամուսնացեալ կղերին մէջ. հաւատար իրաւունքներ պիտի տայ երկուքին ալ, ու թեքեւս քիչ մըն ալ տակի պիտի քաջալերէ ամուսնացեալ կղերը՝ հետզհետէ նուազեցնելու համար ամուրիներու յարածուն թիւը:

Համագումարէն դուրս, Հայ զարգացեալ կղերը, մանաւանդ հոս, Պոլսոյ մէջ երկու զխաւոր բաներ ունի կատարելիք:

Ա. Մարդագործումը կղերական դասին մէջ: Եթէ զժուար է արդէն գտնուած. ներուն ղէմ որ և ինչ որոշում, գոնէ շատ զիրքին է, յետ այսու չընդունիլ իր մէջ ու և է անարժան ընծայացու: Հայ կղերը այնքան տակի պիտի չաչալու որքան որ Ան հասնի զարգացման աստիճանի մը որ պատուարէր լլկայ Հայ ազգին և Հայ Եկեղեցւոյն:

Բ. Հայ կղերը պիտի քալէ ժամանակին հետ. — Նկատի տանելով ժամանակին

սրահանջումները, կրկերը իր զարգացումովը
ստացնորդը պիտի ըլլայ ժողովուրդին, կրո-
նական տախտակութիւններէն դուրս լինե-
լով Ա'ն, բնէն պիտի առաջնորդէ իր Հա-
ար: Այս'ն, կրկերը բնէն պիտի սովորեցնէ
Հայուն՝ բոլոր այն բաները որոնք անհրա-
ժեշտ են Հայուն՝ ապրելու համար իրրե-
ւոյ, իրրե Օսմանցի: Իր կոչումին զխա-
կիյ անձնցիր կրկերը անհուսիք պիտի
զտնէ ունկնդիրներու աստար թիւ մը: Ա-
ստանկ հովիւներով օծուած բնմ մը միշտ
իրեն պիտի քաշէ ժողովուրդը, և անձին
օգնականով տուած քաջութները մեծագոյն
ազդեցութիւնը պիտի ունենան Հայ ժողո-
վուրդին վրայ:

Վարդապետական և քահանայական կրկ-
երն Միութիւնները զժողովարար ստանց
բան մը կարենալ բնելու միայն իրենց
նախնական վիճակին մէջ: Մէկ քանի և
բնութիւնները ընտրելու համար չէր որ
կազմուեցան այդ Միութիւնները, մենք,
աշխարհականներս, շատ աւելի կարեւոր բա-
նէր մը կը սպասենք այդ Միութիւններէն:
Այս'ն, կը սպասենք որ վարդապետական և
քահանայական միութիւնները փոխանակ
անջատարար գործելու, միանային, մէկ
ծրադրով բնութեալու և Հայ ազգին և իր
կեկեղեցւոյն ի սպաս դնելու իրենց բարո-
յական և մտաւորական կարողութիւնները:

Հայ եկեղեցւոյն հաւատարիմ զաւակնե-
րը, որոնք լաւագոյն կը ճանչնան իրենց
եկեղեցին, սովորած են և կը ճանչնան անոր
երանաշնորհ Վարդապետները, կ'ուզեն կը
փափաքին այդ Ս. վարդապետներու օրի-
նակին հետեւողներ տեսնել իրենց եկեղեց-
ւոյն մէջ: Ահա՛ այս իսկ պատճառով պէտք
է որ կղերը նկատողութեան առնէ ժողո-
վուրդին հոգեկան այս րաջճանքները:

Տաճարի խմբագրութեան, և անոր հա-
մակիր զարգացեալ Հայ կղերին կը մնայ
արեւմտեւր նոյն առջ, թէ Հայ կղերը արդէն
սկսած է քաղել ժամանակին հետ, իրեն
յանձնուած հօտին ամեն կերպով օգտակար
լիցիւր համար:

Զարգացեալ կղերը քարգանք պիտի
զտնէ ամէնուրեք, Հայ եկեղեցւոյ հարա-
զատ զաւակներէն:

Պէշիքթաղ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՏԻՉԵԱՆ



ՀԱՅ ՍԵՐԵՐԱԺԻՇՏՆ Ի ԹՈՒՐԻԱ
Տ. ԿՈՄԻՏԵԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ասուպի մը պէկ կեաւ ու անշաւ Պոլսո
հորիզոնին վրայէն:

Ընդհանուր երամշտական աշխարհին մէջ
ճանչցուած ու գնահատուած մեծ տաղանդ
մը, գեղեցիկ ձիրքով մը— հրաշալի կերպով
մարզուած ձայնով մը— օծուած, Տ,
Կոմիտաս վրդ, որ կրնանք բնդ անկաս-
կած թէ Հայոց մեծագոյն երամշտական
հեղինակութիւնն է իր համալսարանական
հմտութեամբ, հազիւ երեք չորս օր մնաց
Պոլիս, ուր կեամ էր Ս. Էջմիածինէն,
իր ծննդավայրը, Բէօթահեա, բնասանկան
քաղցր միջերդարի տակ կազդոյր զտնելու
իր յոգնութիւններուն:

Հազիւ քառորդ ժամու տեսակցութիւն
մը, զոր ունեցանք իրեն հետ, բաւական
եղաւ նշանելու զիւրահաղորդ, համակրելի
բնասարթութիւնն այդ մեծ վարպետին, որ
կարծես կ'անդիտանայ Աստուծոյ պաշտեալ
անհման ձիրքը, և ասարկներու յամառ աշ-
տաթեամբ ձեռք բերուած երամշտական
խորունկ հմտութիւնն և ստալանդը որ կը
միանան իր վրայ, Համեստ դրսեկրոյթով

այդ նշանաւոր գէճքն յունիս Վին Ղաւթիայ եկեղեցիին մէջ տեսնելու և իր մահաբարձի երգեցողութիւնը լսելու բանն ունէ՛լ չղնչին կրչան մերժաւորապէ՛ս դադար վար կազմել թէ զեղարուեստի ո՛ր աւանդան բարձրութեան մը կարելի է հասցնել հայ երաժշտութիւնը՝ որ, աւանգ, տհառիին անհումներ կրած է խաճճեցեալ երկարաւորապէ՛ս ծերձերուն հետ։ Դժբախտութիւնն ո՛ր պիտի լլար, եթէ Ռդիս պրկուէր այդպիսի մէ՛ծ վարձաւոր մը համարձեւերն և եկեղեցական երգեցողութիւնները լսելու հաճոյքէն, և անոր խորհուրդներէն օգտուելու չեղելի տախիլէն։ Ուրախ ենք ծանուցանելոյ որ Ն. Գերստառութիւնը՝ Կուսինայէ գարձին՝ ամիսի չափ պիտի մնայ այստե՛ղ, և պիտի տայ համարձեւեր, և գու՛շ պիտի հաճի բնեղ շահեկան դաստիարակութիւններ, և տեղեկութիւններ տալ ընդհանրապէս արեւելեան և մասնաւորապէս հայ երաժշտութեան վրայ կատարած համեմատական ուսումնասիրութեան արդիւնքներն մտաին։ Բայց կը թողունք որ Տ. Կոմիտաս վրդ. ի գործունէութեան մօտէն տեղեկ մէկը, անոր կենսագրական գիծերը ծանօթացնէ Տաճարի ընթերցողներուն։—

«Տ. Կոմիտաս վարդապետ, քնիկ Կուսինայի, շուրջ 40 տարեկան է։ Պատանեկան հասակին զրկուած է Ս. Էջմիածին՝ աշակերակու Գէորգեան ճեմարանի տըր առաջին օրէն մեծ սէր և ընդունակութիւն յոյց ստած է Հայ եկեղեցական երաժշտութեան, ճեմարանի չրջանն աւարտել յետոյ Եւրոպա դնայ երաժշտական բարձրագոյն ուսում՝ ստանալու համար, և տարիներու աշխատութենէ յետոյ յաջողեցաւ ձեռք բերել Պելլինի Բօնսէրվաթուսին վկայականը։ Արմենիի և Փօմբօգիսիօնի ճիւղերուն մէջ ևս կատարեղազորձուելու համար մասնաւոր դասեր առաւ Վեմանուտ երաժշտաւիտ Մ. Պոլաշէրէն որ Երաժշտութեան Միջազգային Կաճաւի նախագահն է։ Հայկական բնատուճիկ երաժշտութիւնը ծանօթացնելու համար քաղաքակիրթ աշխարհին, Պելլինի մէջ նուագահանդէսներ կողմակերպեց. Եւրոպայի արուեստագէտներ

մտրդեց՝ Հայ եկեղեցական երաժշտութեան և աշխարհիկ երգերուն եղանակը, շեշտերն ու սուգանութիւնը ասկեր յնկով, և իր գեղեղմարութեամբ տեղի ունեցած այդ նուագահանդէսները կատարեալ յաջողութեամբ պատկանցան՝ գնահատուելով նոյն իսկ Ներսիսի զմեւարանած երաժշտագէտներէն, որոնք յայտարարեցին թէ «Հայկական երաժշտութիւնն յայտնութիւն մը եղաւ»։ Եւրոպական քաղկերներն համակրական յաշուաներով շնորհաւորեցին գիտնական վարձաւոր, յայտնելով թէ՛ ապառուածէն ու լելի՛ լաւ դադարաւոր ստացան հայկական երաժշտութեան մասին։

Ուսումնասիրած է նաեւ արեւելեան երաժշտութիւնը, հայկական, յունական, պարսկական, աբաշական, տաճկական երաժշտութեանց նլրութիւնները, տարբերութիւններն ու հանգիստութիւնները։ Վերջապէս, պզտիկ տարիքէն մինչև այսօր իր լըլըր ժամանակն ու կարողութիւնն իր մասնագիտութեան յաւելալուցած լլըլով, եկեղեցական թէ աշխարհիկ երաժշտութեան, բազմաճառ հեղինակութիւն մը կը հանդիսանայ մեր մէջ։

Տ. Կոմիտաս Վարդ. ի աշխատասիրութիւններուն մէջ նշանաւոր է «Հայ Բնար», Հաւարածու Գեղջուկերգերի, — Lalays Arménienne, recueil des chansons rustiques, transcrites et harmonisées par Komitas Wartapeto։ Եւրոպականով ձայնագրուած երգերու այս հաւարածոյին նպատակն է հայկական ինքնուրոյն երաժշտութեան ծանօթացնելու և դոյն ծանօթացնել Եւրոպայի և Հայ հետաքրքիրներուն։ Տպւած է Բուրիզ, Հայկական Միութեան ծախքով և երգերուն իմաստը ցրանսելէնի վերածած է Տիար Արշակ Չօպանեան։ Տ. Կոմիտաս Վ. այս արդէ երգերը գրի առած է լաւն իսկ Հայ գիւղացիներու բերնէն, և եղանակին պահանջման համեմատ՝ երկու, երեք, չորս կամ հինգ ձայնի վրայ ներդաշնակած է արուեստական այնպիսի նրբութիւններով, որ դաշնակի հետ կամ խմբովին երգուած ատեն արտօնելի տաղաճութիւն կ'ընեն և իր ձեռնհասութիւնը էր շեշտեն իրբու fousqolixkor։ Պայմանաւ անշուշտ որ յա-

ռաջարանին մէջ տուած հրահանգներուն համաձայն երգութիւն, մասնաւորապէս տրուած հակի նշաններուն ուշ զննելով:

Իր ներդաշնակած բաղմաձայն պատարաւ զը, որ այժմ կ'երգուի Ս. Էջմիածնի մէջ իր իսկ զեկամբարութեամբ, միապաղաղ ետաձայն կամ քրտաձայն չէ, այլ եղանակի բնութեան ու բաւերու իմաստին համեմատ երկու, երեք, չորս հինգ, վեց, եօթն և տակի ձայներով կազմած է, ինչ որ գոյցէ զարմայնէ մեր ետաձայն կամ քրտաձայն բնութեան զէր զխտորութիւն բնոյնը, եթէ կան: Այս պատարազն երգուեցաւ նաեւ Բարիզի մէջ, ուր մեծ ընդունելութիւն գտաւ:

Բայց ամէնէն զնահառեղին հայկական հին խաղերուն լուսարմութիւնն է անշուշտ, որուն մասին քիչ մը ծանօթութիւն տուած էր այս էջերուն մէջ: Խաղերու զխտութիւնը որ կը կոչուէր Մանրուսում, զարերու ընթացքին մոտցուած կրած է, և վերակենդանայնելու համար Պապա Համբարձում Լիւօնեանի, Եղիա Տնտեսանի, Մխիթարեան Հայր Բժշկեանի, Գաբրիէլ Երանեանի և ուրիշ լանտէրներու բազմ հետազոտութիւնները միացած են աղարկին: Խիստ հետաքրքրական է հարկաւ զխոնալ թէ ի՞նչ եղանակով կ'երգուէին մեր եկեղեցական երգերը 10 կամ աւելի զարեր առաջ, կամ թէ ի՞նչ էին այ աշխարհիկ երգերն ի հնումն: Վասն զի պէտք է խոստովանիլ թէ միամտութիւն կ'ըլլայ պնդել թէ մեր եկեղեցական երգերը փոխուած չեն: Շնորհիւ Տ. Կովստաս վրդ.ի, քիչ տառնէն պիտի ծանօթանանք հին եղանակներուն, ինչպէս ինք կը խոստանայ: Պարզ խաղերուն լուսաբանութիւնը զուգադիպեցաւ Վիհ. Կաթողիկոսին Ս. Էջմիածին համեմուտ օրերուն, և յարգելի վարդապետն իր յոգնաջան աշխատութեանց աոյն արդիւնքը մատուց իրը ստահաւորչեայ բարեկաշիւ զաշտանն նորրնախի Հայրապետին, որ լաւագոյն նախարարութեամբ նկատեց զայն:

Պիլսոյ մէջ գտնուած միջոցին տարաւ կոյս չունինք որ իր հմտութենէն օգտուելու զուգու մեր երաժշտադէտները սիրով կը զոհայ նէ:

Կ. Պ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ(')

ԳԼՈՒԽ Գ.

Արիսակես Յովհաննէսեան զարգացնող Հայ ձայնագրութեան. — Մեծանուն վարպետին արժանաւոր յաջորդ. — Արիսակեսի վայելած փառքը. — Սուրբ Մեհիս Կայսրէն գտած պատիւներ. — Երեւելի աշակերտներ. — Նոյա գործակցութիւնն իր հրատարակութեան հետ. — Շարականաց բարեկարգութեան յանդիւր Յանձնաժողովի առջեւ. — Արիսակեսի կարեւոր հեղինակութիւնները:

Լիւօնեանի տարադէպ մահուամբ գործադարար կրտսերս միաց ձայնագրութեան գլուտը, որոյ կատարելագործութեան պատիւը վերապահուած էր իր արժանաւոր աշակերտին՝ Սրիստակէս Յովհաննէսեանի, որ ծնաւ 1812ին ի Լանկա. Սորա հայրը՝ Լէքէճի Յովհաննէս՝ որ ծանրադին չալերո և աշխու կերպասներու աղտերը մաքրելու և զանոնք նորոգելու արհեստով կ'զբաղէր, (որուն համար «Շալճեան» մականուամբ կը յորջոյնէին երբեմնակի իր որդիքը), բախտախնդրութեամբ Սրիստակէսը զաղթած էր Ժամանակ մը, բայց հոն անյաջողութեան մասնուելով ստիպուած էր վերադառնալ ծննդավայրը և հաստատուիլ Լանկա, ուր ամուսնանալով ունեցած էր երեք արու զաւակ՝ Յովսէփ, Արիստակէս և Վրթանէս, և Էփրեմի անուն աղջիկ մը:

Ասոնք իրենց նախնական կրթութիւնը ստացած էին Մայր Վարժարանի մէջ, ուր դպրութեան պաշտօն ալ կը վարէին. բայց Արիստակէս իր ցոյց տուած յաջողակութեամբ գերազանցած էր իր եղբայրներն ու ընկերները. այդ պատճառաւ Պապա Համբարձումի մասնաւոր խնամքներուն ալ առարկայ եղած էր: Այն տառնները սովորութիւն կար՝ ազգային կենսական խնդրոց վրայ վիճաբանելու համար՝ գիշերներն հուաքուել ամիրաներէն մէկուն կամ միւսին տունը:

(') Շարունակութիւն 11րդ քիւնն:

Այսպէս, առաջ տօներու միջոցին դարձեալ գիշեր մը ժողով բրած ըլլալով Մայր Եկեղեցւոյ միւթէ վէլի Սախաեան Մարտիրոս ամիրայի տունը, ներկայ ժողովականներէն մին՝ որ մեծ փափաք ունէր Արխատակէսի «Այսօր դառք»ը մօտիկ ընելու, համբերութիւնը կ'ունենայ ամբողջ գիշերը լուսնեկու, որպէս զի հետեւեալ օրուան Պօգոս Պետրոսի տօնին երգութիւնք «Թագաւոր յախաեանը զոր սովորարար Արխան Եթէկ կուտային՝ մօտիկ ընէ. տարաբնիտարար նոյն օրը հիւր գպիր մը գտնուելով ի Մայր Եկեղեցի, անոր կը հրամայընեն Սմիրան, բոլորովին զայրացած իր յուսախարութեան վրայ, իսկոյն կը մեկնի եկեղեցիէն՝ ցաւելով որ ամբողջ գիշերը չէր քնացած:

Արխատակէսի ընկերակցաց մէջ ամենէն աւելի ձեռնառու գտնուած է Յովհաննէս Միւհէնտիսեան, որ քիչ շատ ազդեցութիւն ունենալով՝ կ'աշխատէր միշտ համոզել ամիրաները, որպէս զի պաշտպան կանգնին Արխատակէսի՝ յաջորդեցնելով զայն Պապա Համարձուով, որ նոյն միջոցներուն մեկուսացած կեանք մը կը վարէր ի Ստագիւղ (տե՛ս Բ. գլուխ): Օր մը առիթ գտնելով՝ Գերագոյն ժողովի մէջ յառաջայ խօսքերը կ'ուղղէ Միւհէնտիսեան. — «Ամիրաներ, մինչև ե՞րբ պիտի համբերենք մեր գպիրներուն դործած այս անիրաւութեանց. դուք ամենքդ ալ գիտէք որ խեղճ Պապա Համարձում ինչե՛ր քաջեց տիրացու Եղիսի եւ իր նմաններու ձեռքէն, մինչև որ օձիք ազատելու համար վերջապէս ստիպուեցաւ ոտար երկիրներ երթալ իր վաստակը ձարելու. ամբթ չէ՞ մեզի՝ որ երեսէ ձգած ենք այսպիսի անձնաւորութիւն մը, որ եկեղեցւոյ պայծառութեան համար գիշեր ցորեկ աշխատելով ասանկ հրաշալի գիւտ մը տալով բերք եւ բաղմաթիւ հեղի՝ տկութիւններ ըրեր է. իր հակառակօրդ տիրացուները զո՛նէ փոքրիկ Տաղ մը կամ Մեղեղի մը չինէին՝ որ Համարձումի անունը չտայինք այլեւս: Այսքանը բաւական չսեպելով հիմա ալ ելեր Արխատակէսը կը հալածեն,

անոր հետեւողն է ըսելով, Ձեր արդարաւորութեան կոչում կ'ընեմ, ի՛նչխան. ներ, հերի՛ք է անցելոյն մէջ դործած խոշոր սխալնիս, ուղղե՛նք մեր պակասութիւնը եւ զայն դարմանելու համար աշխատինք ձեռքերէնս եկածը ընել, քաջալերելով զո՛նէ անոր աշակերտը՝ Արխատակէսը, որպէս զի այս գեղեցիկ արուեստը չմեռնի դեռ չծնած:»

Այս եւ ասոր նման խօսքերով Միւհէնտիսեան ըջանար Արխի պաշտպաններուն թիւը աւելցնել, լաւ ուսումնասիրած ըլլալով անոր փոքրակազմ մարմնոյն մէջ պարունակուած մեծ տաղանդը: Դիպումն առաջնորդեց որ Միւհէնտիսեանի փափաքը կատարուի, վասնզի 18 Յին Լիմօնճեան մեռնելով թափաւ կը մնար երաժիշտ դասախօսի մը պաշտօնը. ուստի Արխատակէս, որ այդքան ժամանակ դպրութիւն ընելով ամբողջ Գում-Գարուի թաղեցւոյց համակրութիւնը գրաւած էր, միաձայնութեամբ որոշեցին յաջորդ կարգել մեծանուն վարպետին եւ քիչ ատենէն յաջողեցան. Բայց որովհետեւ Գարթալցի Յարութիւն՝ Պէղճեան ամիրայի կտակին զօրութեամբ 500 զըռ. տոմարժողակ կ'ստանար՝ մեծ գպիրներու ծարականի դաս տալով Ուսումնարանի մէջ, ամիրաներն ալ որոշեցին 900 զըռ, ամսական վճարելով իրենց քսակէն: Արխատակէս Յովհաննէսեանը ձայնագրութեան ուսուցիչ կարգել Մայր Վարժարանի աշակերտաց, որոյ ի հաստատութիւն Յակոբոս Պատրիարքն ալ օրհնութեան կոնդակով մը վաւերացուց սոյն պաշտօնն ի վերջոյ:

Արխատակէս մեծ դժուարութեան մը առջև կը գտնուէր սակայն. վասն զի թէև Միւհէնտիսեանի միջոցաւ Պապա Համարձումի հեղինակութեանց մեծագոյն մասը իրեն յանձնուած էր, բայց Լիմօնճեան տակաւին չէր կրցած բոլոր չափերն ու ամառակները պէտք եղած կերպով կանոնաւորել, որպէս զի խրաքանչիւր ձայնանիչի վրայ դրուի նաև տեսողութիւնը, առանց որոյ թերի կ'ըլ-

լայն կարգացումը եղանակները^(*)։ Այս կարևոր պահանջները լրացնելու համար, Արխատակէս¹ օժանդակութեամբ Միւշէն-տիսեանի² հնարեց մանր չափերը՝ ծունկ, ծնկներ, թու, կիսաթու, քառաթաւ, ինչպէս նաեւ իւրաքանչիւր եղանակի բաղիման ընթացքը որոշելու համար նշաններ տակադրեց՝ ծանր, չափաւոր, յորդոր և ն. բաղիմաներու՝ ալ. մ, թէք, թէքէ, թէ՛նէք, անունները մէկի մէկէն ձգելով (որոնք բուսականներու կը վերաբերէին) և սկսաւ գոյծածել՝ կէտ, գոյգ կէտ, եռակէտ և սուր։

Ասոնք ըստ բառականչին կարգադրելէ վերջը, ի դիւրութիւն ընթերցողաց՝ միավանկ բառերու վերածնց ձայնանիշերու անունները, որով փոխանակ «րօ, է, վէ, բէ, խօ, նէ, պօ» լսելու՝ «ալ, նի, զի, բի, թի, ֆի, լի» անուններով, որոնք կը համապատասխանեն էլէկեա՛, Աչրան, Արաք, Բոստ, Տիւկեա՛, Սէկա՛, Չարկեա՛ ձայններու, ինչպէս նաեւ անոնց կիովերներն ալ՝ «ալ, նէ, զէ, բէ, թէ, ֆէ, լէ» որոնք կը համապատասխանեն Բէն Զօար, Բէն Աճէմ, Կէվէլա, Ձերկիւլէ, Քիւրաի, Բուսեյիք, Սաար կամ Զիճաղ ձայններուն, որպէս զի աշակերտը ո՛ր և է եղանակ մը երգած ատեն զժողարութիւն չկրէ ձայնանիշերու թէ՛ մոխոջ և թէ՛ կիւսածայն անուններովը կարգաւոր, նոյն իսկ ընդհարումները (չարթմա)։

Այսքան բարդաւածեալ զիճակի մը հասցնելէ յետոյ՝ իրաւամբ կրնանք բռնել որ եւթէ՝ «տալա Համարձում՝ Էլմոնճեան Հոյ ձրջնադրութիւն չիմնադիրն եղաւ, Արխատակէս Յովհաննէսեան ալ զայն զարդացնողն եղաւ՝ իր կատարելագործած կանոններովն և յարատեւ հետեւու-

թեամբը, որոյ չնորհիւ մինչև կրցաւ տարածուիլ այն արուեստի զիւար որ դուցէ մեռնելու դատապարտուէր, եթէ իրր մեծանուն վարպետին արժանաւոր յաջորդը՝ Արխատակէս Յովհաննէսեան կեանք պարզեւած չրլար անոր, իր աննկուն ու անյողող կամեք կուրծք դնելով բոլոր ձայնադրութեան թշնամիներուն և զինքը հալածողներուն, տալս լինելով իր միակ և հօր պաշտպանին՝ արքունի վաւագապետ Տատեան Պոզոս պէյի, որուն վրայ պիտի ի տանք։

Պէզեան Յաբութիւն և Պաշեան Պրէզոր ամիրաններէ ետքը՝ նշանաւոր հանգիստացած էր նաեւ Տատեան Պոզոս պէյ, որ իր հօրեղորո՝ Յովհաննէս ամիրայի հետ արքունի վաւագապետ կարգուած էր Ազատորի վաւագարանին։ Սիրող ըլլալով երաժշտութեան, գրեթէ ի մանկու-թենէ սրբեգրած էր Արխատակէս Յովհաննէսեանը, և շատ անգամ անոր աշակերտներէ՝ մէկ քանին բերել տալով Ա.՝ թէ՛ ֆանօի տալարանքը, զոհուակութեամբ կը ըսէր անոնց ներդաշնակ երգեցողութիւնները։

Արխատակէսի աշխատանքի սիրելի ըլլալուն զլիաւոր պատճառն ալ սա՛ էր թէ մինչգլխա մէկ կողմանէ աղղին բնութեւոյն մասը Հոռոմաղաւանդութեան կը յարէր՝ հրապարակելով անոնց փայլուն խոտանմանքն, և միւս կողմանէ Բողոքակահութիւնն ալ սկսած էր տարածուիլ՝ անմիաբանութեան որոնք ջանելով մինչև այն ատեն համերախութեամբ կենակցած երկու համազգի եղբարց միջ, Արխատակէս անյողողը կը մնար իր կրօնին ու հաւատքին, զրկապինդ փորած՝ իրր հաւատարիմ որդի Հոյ Առաքելական Ս. Եկեղեցւոյ։

Պետրոս Չեմէլքճեան և Սիմեոն Մինէճեան Պապականութիւնը ընդունած էին, ինչպէս Գափաղիկեան եղբարք և Արխատոր Լուսերակահանութիւնը։ Այս վերջնայն հետեւած էին իր երկու եղբայրները՝ Յովակիմ և Վրդանէս, իրենց քրոջ Էֆտիկի հետ միասին, թախանձելով միանգամայն զԱրխատակէս որ իրենց օրինա-

(*) Եղարուեստասէրներու հետաքրքրութիւնը գոհացնելու համար մատուցիր ենք յառաջիկային հրատարակել Էլմոնճեան «տալա Համարձումի» ձեռագրով «Յարեալ Քրիստոս» ձայնադրութեւ Տաղը, որպէս զի գաղափար մ'ունենան թէ որքան դուրի կը դանուէր կանոնական շփոթել՝ այն ատենուան ձայնադրութիւնը։

կին հետեւի. իսկ նա՝ ամրացինք կեցած իր սկզբունքին և համազմուն վրայ, երբէք տկանջ չկախեց անոնց խօսքերուն, և քայլ մ'իսկ չշեղեցաւ Լուսաւորւորչայ սուրբ հաւատքէն. իր այս հաստատամտութեան համար, այնչափ սիրելի եղաւ Մատթէոս Պատրիարքին, որ երբ 1866ին Մայր Եկեղեցւոյ բեմէն սկսաւ բանադրել Բողոքականութեան յարազ Պօղոս և Ռովսփի Գառնալիկեանը, Ան հաւատ Սոկան, Միրիքէլամ Կարապետ, Բէրէստէճեան Ստեփան և երաժիշտ Արիստղոս, խնայելով Արիստակէսի՝ չուզեց յիշատակել նորա եղբարց՝ Յովակիմոյ և Վրդանէսի անուններն ալ միաներուն կարգին:

Ահա այս պատճառով էր որ Արիստակէսի անունը սրիւղի եղաւ ժողովրդեան, որ միշտ համակրանք կը խօսէր անոր նկատմամբ. այն թուականէն ետքը ա'յնքան մեծցաւ իր համբաւը, որ Պատրիարքանիստ եկեղեցւոյն մէջ իր ուղափոխ շարունակելով հանդերձ, կ'այցելէր նաեւ Սկիւտարու Ս. Խաչ եկեղեցի՝ փ'շմիշեան Նշան ամիրայի խնդրանք, նաեւ Ստմաթիա, Պալաթ, Գարակէօմբիւի եւն. Բայց ասոնցմէ աւելի մեծ պատիւ մը վերաբաշտած էր Արիստակէսի՝ իւր անխնայ աշխատութեան և յարատեւ զարգացման համար:

1846ի դարնա՝ սկիզբները երջանկաշէշատակ Սուլթան Մէճիտ Կայսրը ուզեց այցելել Դանաբի եզերքը գտնուած քաղաքները, ասիայն փոթորկարեր զին պատճառաւ չկարենալով ծովու ճամբով երթալ, ստիպուեցաւ ցամաքէն ուղեւորիլ. բայց նոյն օրն ալ երկինքը մատախլապաւ և անձրեւային ըլլալով, կը հարկադրուի Ա. Սթէֆանո՝ Տառեան Պօղոս պէյի առնել իջեանիլ, ուր չորս օր կը հիւրասիրուի մեծարածք (Հայոց Պատմ. 1871, Աւետիս Պէրպէրեան):

Տառեան գերդաստանին համար անակնկալ և արտասովոր պատիւ մ'էր այս. Ռատի Պօղոս պէյ փափաքելով հաճելի ժամանց մ'ընծայել իւր վեհա-

փառ շիւրին, իսկոյն կը հրամայէ Բրիտանիէսի՝ որ յառաջագէտ աշակերտները առնելով իր տարւածքը գայ. Անմիջապէս կը ներայանայ ուսուցիչը իր ուսանողներու, որոնք կ'սկսին ներգաշնակ երգել Նորին Վեհափառութեան ձօնեալ «Էյ սէրվերի կէրտուն» երգը միաբերան:

Շատ դո՛ւ կը մնայ Սուլթան Մէճիտ աղայոց կանոնաւոր երգեցողութենէն, և հետաքրքրութեամբ կը հարցնէ թէ ո՞վ է ասոնց դաստառն, Պօղոս պէյ, կը փութայ ներկայացնել զԱրիստակէս, որ խոնարհութեամբ ի ծունր կուգայ՝ պետք եղած արգանքն ընելով վեհապետին. Բարեմբա արքա՝ խօսքն ուղղելով Արիստակէսի՝ քաջալերական ձայնով մը կ'ըսէ. — Մէմուշ օլտուֆ, հօճա, չօգ եաշա՞. և ի նշան իր Բարձր գոհունակութեան՝ 500 զրշ.ի գումար մը կը պարգեւէ անոր, 200ական զրշ. ալ աղայոց ընծայելով. քանի մ'օր վերջ ալ պատուանշան մը կը զրկէ Արիստակէսի (ոսկեղծ աստղ մը՝ մահկնով) որպէս զի իր ֆէսին վրայ կրէ զայն:

Իր փառաց գաղաթնակէտին հասած էր այլեւս Արիստակէս Յովհաննէսեան, տեսնելով որ հարկ եղած կերպով կը գնահատուի իր արժանիքը, ուստի դատած այս ընդունելութենէն քաջալերակալ՝ սկսաւ մայրաքաղաքիս բոլոր թաղերուն մէջ տարածել երաժշտութեան արուեստը՝ իր անուանի տաշկերտաց միջոցաւ, որոնք էին՝ Գարրիէլ Երանեան (1827-1862), Յարութիւն Իրկանեան (1863), Համբարձում Չէրչեան (1868-1901), Գարրիէլ Խոնճեան (1833-1903), Խաչատուր Շալճեան, Գրիգոր Չամաչըրճեան և Աստիկ Խանէնտէ:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԷ. ՀԻՍԱՐԼԵԱՆ

(Շարունակելի)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՏՕՆԱԿԱՏՍՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(— ԵՌԻՆԻՍ 1 — 26 —)

Երկու երեք շաբթուան շրջանը, յորում Տաճարի յունիս 13ի թիւին հրատարակու մը յապաղեցաւ՝ շաբաթաթերթի վերածման անհրաժեշտ կարգադրութեանց համար, կարեւոր ժամանակամիջոց մ'էր տէրունական և եկեղեցական-ազգային տանկրու տեսակէտով:

Այդ միջոցին հանդիպեալ ՀՈԳԵԳՍԻԼՍՏԵԱՆ տանը, գերազանցօրէն ներշնչող տան մը, զոր այնքան զգայուն ու համալուած հոգիով մը երգած է Շնորհալին: Տան մը որ իր պատմական հաստատուն հիմքը ունի Նոր Կտակաբանին մէջ: Դուկաս Աւետարանիչ Գործք Առաքելոյն մէջ շատ սրտէ կերպով կը պատմէ հրաշալի զէպքը որ տեղի ունեցած է Սիոնի վերնատան մէջ, երբ՝ Պենտէկոստէի օրերը լմնալէ Խոփը, բոլոր աշակերտները կը զանուէին միասին. — «Եղև յանկարծակի հնչիւն յերկնից, եկեալ իբրև սառսիկ հովոյ, և ելից զաւմնայն տունն յորում նստէին: Եւ երևեացան նոցա բաժանեալ լեզուք իբրև ի հոյ, և նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա: Եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով, և սկսան խօսել յալ լեզուս, որպէս և Հոգին տալիս բարբառել նոցա: Երեսոյթը աննախորթաց էր, անտուր, հրաշալի: Ու բնական էր որ Երուսաղէմի բնակչութիւնը, երկիւղած Հրեաներ, և զօրակն եկողներ, Պենտէկոստէի հրէական տանին առթիւ հաւաքուած, նաեւ օտարազգիներ մեծ թուով, սքանչալուծով զիտէին գերբնական երևուոյթը, և զարմայնամբ հարցնէին իրարու. «Ո՞չ առտիկ ամենեքեան ստրա որ խօսինս Գաղիլիացիք են: Եւ զիմոյ լեւեք մեր յիւրաքանչիւր բարբառս մեր յորում եմք, Պարթևք, և Մարք, և Իլամացիք, և որ բնակեալ են ի Միջագետս, ի Հրէաստանի, և ի Գամիրս, ի Պոնտոս և Գլաիս, ի Փռիգիս, և ի Պամփիլիս, յԵգիպտոս և

ի կողմանս Լիբէացոց, որ ընդ Կիւրենացիս և որ եկք Հռովմացիք, Հրեայք, և եկք նոցան, Կրետացիք, և Արաբացիք, լեւեք խօսից նոցա ի մեր լեզուս, զմեծամեծս Առաքելոց:»

Դէպքը այնչափ գերբնական էր, այն տառիւնան վեր՝ մարդկային մտքի հասողութենէն, որ ընդհանուր սքանչալուծան մէջ՝ բնութեամբ սկիզբովներ — որ գտնուած են ու պիտի գտնուին առէն յարու մէջ ալ — կտակաւներ կը յայտնեն երեւոյթին բնութեանը վրայ, և Պետրոս առաքեալ բացատրութիւններ կուտայ հաճողուած շնորհբով, ինչ որ հզօր ազդեցութիւն մը կ'ունենայ, և նոյն ժամայն 3000 հոգիներ կ'աւելնան հաւատաշէտքներէ թիւին վրայ:

Յիշուած սկիզբովները՝ ամէն բան բացարձակ, նիւթական չօգտմամբ ստուգուող և նիւթին, երեւցածին միայն հաւատարմ հակամէտ, զարեւու բնութագրին մէջ միշտ բնորոշութեան են Եկեղեցիին և առաւանդութեան անհատ տնօրէնութիւններուն, և հրաշք ներու զէմ. բոլոր այսմ արիւն ազդերու, նաեւ մեր մէջ ալ բնորոշութեան ուղիներ, կասկածողներ գտնուած են ինչպէս Եկեղեցիի զանազան վարդապետութիւններուն, նաեւ — ու մանաւանդ — Ս. Հոգիի էջքին ի Ս. Վերնատուն, և առաքելոց լեզուախօսութեան, զոր առ աշօր տեսլ մը, զգալ յախաբալթիւն մը, ընդհանուր յուզուող վիճակի մէջ առաքեալներու անկապակից բացառականութիւններ համարած են: Հոս տեղը չէ խնդիրը վերաբարձարելու: Միայն հաւատացեալ ընթերցողին նկատողութեան կ'ուզենք յանձնել թէ նիւթէն շատ ու նիւթէն վեր հոգիի կեանք մը կայ, և նոյն իսկ նիւթին գիտութիւնը քր վերջնական լրումին չէ հասած. իր վերջին բառը չէ արտաբանած տակաւին գիտութիւնդ նոյն իսկ նիւթին վրայ: Բնութեան տարրերու, բնութեան ուժերու ուսումը, իր յատկաբանութիւններուն մէջ նորանոր հրաշալիքներու առջև կը դնէ զմեզ: Ինչ որ երէկ հրաշք մը, անհատաւաղ իրողութիւն մը, կամ թերեւս խաբէութիւն մը կը թուէր մեզի, այսօր կ'ընդունինք իբրև շատ պարզ, շատ

ընական բան մը: Հետագիրը, հեռաձայնը, մանաւանդ անթել հեռագիրը, — և ասով լուսանկարուելու կարելիութիւնը —, մղոններով հեռու զանուոյ սիրելի մը հետ իբր երես առ երես տեսակցելու, անոր հետ խօսելու, անոր ձայնը լսելու, անոր ղէմքը տեսնելու հնարաւորութիւնը, զոր կը բերեն մեզի վիտական թերթերու արձազանդները, նորանոր ապացոյցներ են զմեզ համոզելու թէ տակաւին անհուն է թիւը բնութեան զաղտնիքներու զորս մենք չենք թափանցած տակաւին:

Շատ աւելի կենդանու և մութ է մանաւանդ հոգեբանական ուսմանց ներկայ վիճակը: Նախազգացում, հեռազգացութիւն, երազ, տեսիլք հոգեխօսական այնպիսի երևոյթներ են որոնց մասին ցարդ բոլոր ըստածները վարկածներէ (hypothèse), ենթադրութիւններէ անդին չեն անցնիր: Հետեւապէս ողջմտութիւնը կը պահանջէ զգուշաւոր լլալ ուրացումներու մէջ, նոյն իսկ մեր կասկածներուն, մեր տարակոյսներուն մէջ: Ուրացում ներկի է՝ երբ սուտ կամ սխալը շօշափելի ապացոյցներով կը հաստատուի: Ժխտում, հերքում կարելի է յերբ մերժուածին տեղ կարելի կ'ըլլայ առաւել եւս ապացուցուած իրողութիւն մը մէջտեղ դնել:

Ս. Հոգեւոյն իջման, լեզուախօսութեան հրաշքին նման իրողութիւններ չեն կրնար ուրեմն իյնալ նիւթապաշտ գիտութեան մը մանրադէտներուն տակ: Կողիին կը վերաբերին անոնք, հոգեկան-կրօնական տրամադրութիւններու, ու մէկ բառով ըսենք, հաւատքի կալուածին մէջ կը մտնեն, գիտակից, համոզուած հաւատքի, որ գիտէ թէ սահման մը կայ ուրկէ անդին չէ կրցած անցնիլ ցայսօր գիտութիւնը, եւ չպիտի կրնայ անցնիլ:

Եթէ զոյգն հաւատք մը ունինք Բրիտտոսի կրօնքին աստուածայնութեան վրայ, եթէ վստահ ենք այդ վսեմ կրօնքին Աստուածային հիմնադրին խոստումներուն վրայ (1), պէտք է համոզուած մնանք

(1) «Յանուն իմ դեռ հանցեն, լեզուս խօսեցին»: (Մարկ. ԺՁ. 17.)

թէ Սիօնի Վերնատան մէջ վերբնական, մարդկային սահմանափակ մտքին համար անբացատրելի բան մը տեղի ունեցաւ, որ պատմական իրողութիւն է, որ զգայախաբութիւն չէ, կեղծիք չէ: Կեղծիքը, խաբութիւնը այնպիսի միջոցներ են որ չեն կրնար կեանք տալ այնպիսի հրօնքի մը, — քրիստոնէական վսեմ, խեղալ կրօնքին —, որ աշխարհի քաղաքակրթութեան, ընկերային կարգ ու սարքին մէջ պիտի բերէր բարեբար յեղաշրջում մը:

Ասոր համար է որ Եկեղեցւոյ Ս. Հայրերը խորունկ համոզումով գրած են Ս. Հոգիին վրայ, քարոզած են անոր ընծաւած անհուն միփթարութեան վրայ, հայցած են անոր շնորհքը, անոր սփոխարար շունչը թշուառ մարդկութեան վրայ, երգած են անոր անհուն ստորոգելիքները, անոր հզօր ներգործութիւնը, որու շնորհիւ կազմակերպուած է և զարույց ի զարս կանգուն պիտի մնայ Բրիտտոսի Ս. Եկեղեցին:

Ո՛ր էր թէ այդ շնորհաց անսպառ աղբիւրէն չիթ մը, կաթիլ մը հոսէր Հայ Ս. Եկեղեցւոյ յետին պաշտօնականերուս, Հայ հաւատալիներու նոր սերունդին վրայ մանաւանդ, տեսնելու համար այն մեծ երախտիքը զոր զարեբու ընթացքին մէջ ունեցած է Բրիտտոսի Ս. Եկեղեցին՝ Հայ վայրավատին ժողովուրդին համար:

Հոգեզալստեան շաքաթէն անմիջապէս ետքը, մեր երանաշնորհ հայրապետները զեղեցիկ մտածումը ունեցած են սուրբերու տօնախմբութեանց շաքն սկսել այն վկաներով և վկայութիւններով որ Հայոց կրօնական լուսաւորութեան ոգևորեալ շրջանին յուզիչ դրուագները կը կազմեն: Յունիս 14ի երկուշաբթին տօնուեցաւ յիշատակը Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց, երեքշաբթի՝ Սրբոց Կուսանացն Գայիանեանց, հինգշաբթի՝ Յովհաննու Կարապետի և Աթանաղիոսայ Եպիսկոպոսին, շաքաթ՝ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեռոյ ելանելոյն ի վիրապէն, և վերջապէս Յունիս 20ի կիրակին՝ Տօն Կաթողի-

կէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի: Այս բարձր յիշատակներն և տօնակատարութիւնները կը յիշենք մեզի զանազան պարագաները՝ քրիստոնէական եկեղեցւոյ վերջնապէս ու պաշտօնապէս հիմնադրութեան Հայաստանի մէջ: Միամիտ համուզումն ունինք թէ բարձր ճշմարիտ Հայերը տեղեակ են այդ պարագաներուն: Գիտենք թէ ի՞նչպէս Տրդատ, Մեծն Սոսրովի զաւակը՝ որ Հռոմի մէջ հեթանոսական ոգիով կրթուած, կատաղի հակառակորդ էր, հալածող մէր քրիստոնէութեան, Արշակունեաց թագաւորական զանր ժառանգիլու պահուն իսկ Հռոմէական չարչարանքներու ենթարկեց Անակի սրդին Ս. Գրիգորը, Երիզայի մէջ Անահիտի դռնաբերութիւն չընելուն համար, և յետոյ Սոր Կիրայի նուազ տուաւ զայն, թէ բաւական տարիներ ետք նահատակեց Հռոմէն հալածական Հայաստան սպառտանող Ս. Կոյսերը՝ Հռիփսիմեանք և Գայիանեանք, և թէ ի՞նչ պարագաներու տակ Տրդատայ լուծման համար Սոր Կիրայէն դուրս հանուեցաւ Ս. Գրիգոր զոր ամէն ոք մոռցած էր և մեռած կը կարծէր, և որ ստիպեց իր հրաշալի բժշկութեամբ և ներշնչող քաղաքութիւններով նոր ոգի, նոր կրօնք, և նոր քաղաքակրթութիւն մը շուրջ Հայաստանի մէջ: Մինչև ան անհնար բացայայտութիւն տալու անհրաժեշտութիւնը, (անշուշտ այն դարուն, այն ժամանակին զարգացումը) և վերջապէս արեւմտեան ողբերու ոգին, որուն սլաքաբոր արեւելեանին հետ, — բազմաթիւ ուրիշ պատճառներու հետ — տալիս եղաւ ի սուր և ի հարձակումը Հայկական գեղեցիկ տշխարհը, և որ ստիպեց ամենահզօր ուղղակի մը եղաւ Հայուն ինքնուրոյն գոյութեան՝ զարերու երկար շարքի մը մէջ, և անոր տեւականութեան իբրեւ տոնոյդ և քաղաքակրթութեան գերազանցութիւն ընդունակ ցեղ մը:

Այո, կ'ենթադրենք թէ ակնարկուած

ղէպքերուն բարձր մանրամասնութիւնները մօտէն գիտեն մեր բարեպաշտ ընթերցողները: Պարզ վերջիշումի մը դերը միայն կատարելու կոչումն են ուրեմն այս տողերը, վերջիշումի մը այն ոգեւորեալ օրերուն, ուր Արեւմտաքի միջոցաւ մոռցուած և արքայական հզօր օժանդակութեամբ երկրին ամէն կողմերը տարածուիլ սկսող նոր կրօնքի մը, — սիրոյ և հաւատարմեան կրօնքին — ոգեւորութիւնը հոգեկան մեծ եւ աւանդ կը ներշնչէր սմանց, և յուսահատական դիմադրութեան ոգին՝ ուրիշներու, հինին կատարող, հին բնատուրական զրուսութեան հաւատարմութեան, քաղաքներու և իրենց համամիտներու, որոնց պերազայն դիմադրութիւնը Տարսնի մէջ՝ Արձան և Դեմետր քրմապետներու առաջնորդութեամբ, շատ կարճատեւ եղաւ ու վերջացաւ իրենց անմիջական պարտութեամբը: Այդ գաւառին՝ Հայ հեթանոսութեան զլիաւոր կեդրոնին մէջ Հայոց Լուսաւորիչը կը հաստատէ Տարօնի Մայր Եկեղեցին, նաեւ Ս. Կարապետի վանքը, որ ըստ ամենայն հաւանականութեան չափաւորութեան մեհեաններ էին, և ճշմարիտ Աստուծոյ պաշտամունքին նուիրուած տաճարներու վերածուեցան: Իսկ ընդհանուր հայութեան մայր եկեղեցին, ամենուն սրտի մօտիկ գերազանց հաստատութիւնը կը մնայ միշտ Ս. Էջմիածինը, որուն տեղը հրաշալի տեսեալով մը ճշտուած և որոշուած ու հիմը զրուած էր Ս. Լուսաւորիչի Կիրայէն եկքին վաղորդայնին իսկ, և որուն փառաւոր կառուցումը այնքան խանդավառութեամբ յառաջ տարուեցաւ: Մինչև իսկ թագակիր զուարթներ՝ Տրդատ, Աշխէն, Սոսրովի զուարթ՝ չվարանեցան հող ու քար կրել, — Հռիփսիմեանց ու Գայիանեանց վկայարաններու շինութեան առթիւ —, գեղեցիկ օրինակ մը տալով բարեպաշտ Հայ ժողովուրդին, որ հաղաթաւոր տարի ետք ալ երկիւղածօրէն կը հետեւի այդ քարծր օրինակին:

Այսպէս, ոգեւորութեան, կրօնական տար ետանդի այդ շրջանին մէջ, Եկեղեցիին նիւթական ու բարոյական չէնքին հիմը կը զրուէր միանգամայն: Յունիս

12-19ի շաբաթը ուրեմն Հայ եկեղեցիի հիմնադրութեան ու վերջնական կազմակերպութեան յիշատակը կը բերէ մեզի, հետաւոր անցեալի մը շէջէն: Ո՛ւր էր թէ հին զարեաւ Քրիստոնէութեան ոգիէն, խորհունկ հաւատաքէն շահնիկ մը մօտը սկստիկ հոգիներու շէջ, ոգևորուելու համար անցեալի բարձր օրինակովը, և այդ ոգիին շէջ զանկու համար ուղիղ ճամբան ճշմարիտ կարգաշման և յառաջդիմութեան:

Հայ եկեղեցին յաջորդ շաբաթ օրը (այսօր 26 Յունիս) կը տօնէ յիշատակը ուրիշ հզօր զէմքի մը, Մեծին Ներսիսի Հայրապետին մեռոյ եւ խաղայ Նախկապոսին: Ս. Դրեզոր Լուսաւորիչէն ետքը, Հայ յատանեայց եկեղեցիին համար առաջին դիրքը կը զբաւէ Սեծն Ներսէս, որ ինքնորոշեալ տեղ մը ունի եկեղեցական պատմութեան մէջ: Հարուստ է իր կեանքը, և կարելի չէ ամփոփ տողերու մէջ խտացիել այդ կեանքին բլրաւոր զիծերը, քանի որ գրութեան համար որոշուած սահմանը, — երեք չորս շաբաթի տօնակատարութիւնները միանգամայն յիշատակելու հարկէն ծագում առած — թոյլ չի տար երկարօրէն խօսելու այս մեծագործ Հայրապետին վրայ, որու կեանքը կ'ընդգրկէ շատ կարեւոր շրջան մը, որ իր հզօր դերը ունեցած է Արշակունեայ երերուն գահուն ամբաստանի համար, և որու մեծագոյն տիրութեան եղած է սակայն մարդասիրութեան ճշմարտապէս Քրիստոնէական ոգին, նաեւ նախապաշարու մեծութեան զէմ մղած պայքարը՝ հաստատելու, ծաւալելու համար Աւետարանի լայնամիտ ոգին խաւար միտքերու մէջ: Ս. Ներսէսի կեանքը մեծ օրինակ մը, իտեպ մտապատկեր մը պէտք է ըլլար բոլոր եկեղեցականներու, որոնք — Առաջնորդ, Վանահայր, Վարդապետ թէ պարզուկ քահանայ — նուիրական դերը ունինք ժողովուրդին միտքն ու սիրտը լեցնելու աղնիկ զգացումներով, Այլ ճշմարտի մեծ հայրապետին մարդասիրական բազմաթիւ հիմնարկութիւնները, շահուն անդ անձին օրինակը (ինչպէս իրաւամբ

կը շեշտէ Ս. Պատրիարքն իր կոնդակին մէջ) ցուցնելու էին մեզի՝ ընդհանուր Հայ եկեղեցականութեան՝ միակ գաղափարն ուրով տնիկա զարեաւ ընթացքին կրցեր է անվերապահ պաշտօնի տարեկայ ըլլալ Հայ սրտերէ և հոգիներէ:

ՍԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՆԿԵՂԱՅԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՐ.

Ազգային-եկեղեցական կեանքի մէջ, վերջին երեք շաբաթներու միջոցին, շատ կարեւոր իրադարձութիւն մ'է Ս. Էջմիածնի մէջ եկեղեցական ընդհանուր ժողովի մը գումարման որոշումը, որուն ի նախապատրաստութիւն մտադրուած է: Կ'ըսուի, Կ. Պոլսոյ եկեղեցականները Հաճադումարի մը հրաւիրել, խորհրդակցելու համար թրքահայ եկեղեցականութեան հետեւելիք ընթացքին վրայ, յառաջիկային գումարելի ընդհանուր եկեղեցական ժողովին մէջ: Պէտքն այնքան ակնհայտ է և ստիպողական, որ անկարելի է չնախադասել Ս. Օյուծիւն Վեհ. Հայրապետին որոշումը: Դարեւո՛ւ երկար ժամանակամիջոցի մը մէջ, Հայ եկեղեցականութիւնը — մերթ քաշաքական զմեղակ պաշտօններու բերումով, և մերթ իր իսկ յոյլ և ծոյլ անտարբերութեան հետեւանօք — մոռցեր է քրիստոնէութեան առաջին զարեաւ մէջ ընդգրկած գեղեցիկ սովորութիւնը, երբեմն երբեմն հաւաքումներ ընելու, խորհրդակցելու համար եկեղեցւոյ ընդհ. վիճակին բարեկաւութեան և բարեկարգութեան հրատապ հարցերուն վրայ: Այս սկզբունքով, լծուցած մնալ զարաւոր անշաքմութեան մէջ, մինչ բոլոր քաղաքակիրթ աշխարհի եկեղեցականները կը շարժին, կը քալեն զէպի յառաջդիմութիւն, աններելի սխալ մը պիտի ըլլար: Յոբմէ հետէ Հայ եկեղեցականութիւնը առիթ չէ ունեցեր խորհրդակցելու եկեղեցական ընդհանուր խնդրոց վրայ, աշխարհի վիճակը շատ փոխուած է, ժողովրդային զարգացումը նոր պէտքեր, նոր պահանջներ ստեղծած է, որոնց ան-

կարելի է գոհացում չտալ: Հաստատուն մնալով հանդերձ Հայ. Առաքելական Ս. Եկեղեցւոյ հիմնական սկզբունքներուն և վարդապետութիւններուն, պէտք է խոստովանիլ թէ ծիսական-արարողական երկրորդական պարագաներու մէջ օտարամուտ շատ բաներ կան այժմու կարգուսարքին մէջ, որ ստուեր կը ձգեն Հայ. Եկեղեցւոյ նախնական պարզութեան վրայ: Եկեղեցին ժողովուրդին համար է: Ժողովուրդն իսկ է: «Շարաթ վասն մարդոյ եղև»: Յիսուսի խօսքն է աս, և ճիշտ այդ աւետարանական պատուէրին համաձայն զորք մը պիտի ըլլայ միջոցներ խորհիլ՝ Եկեղեցիին տալու համար իր երբեմնի հզօր պիտի, ժողովրդեան բարոյական ու մտաւոր զարգացման համար: Չենք ուզեր ծրագրեր պարզել կատարուելիք լարեփոխութեանց: Աշխատակից մը՝ Տիար Յ. Մկրտիչեան, Տաճարի այս թիւին մէջ իսկ նախագիծ մը ունի այդ մասին, կարճ և կտրուկ յօդուածի մը մէջ: Թէև իր առաջարկութեանց նկատմամբ վերապահումներ ունենանք, բայց իր ամբողջութեանը մէջ մեծապէս ուշադրաւ է զրութիւնը, որ մինակը չպիտի մնայ, և յառաջիկայ թիւով մը պիտի սկսինք հրատարակել շարք մը յօդուածներու՝ ճիշտ այդ նիւթին — Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան — վրայ, ձեռնհաս եկեղեցականի մը կողմէ գրի առնուած:

Իրողութիւն է թէ Հայ եկեղեցականութիւնը ինք պէտք է ձեռնարկէ Հայ Եկեղեցւոյ օտարամուտ աւելորդ ծէսերու զտումին և իր փոսած զեղծ անդամներու մաքրագործումին, և թէ չուզեր Եկեղեցին հիմէն քանդել ճգնողներուն ձեռքը տալ կարեւոր զէնք մը՝ այդ քանդումի գործն յաջողապէս ի գլուխ հանելու համար:

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Այդպիսի հիմնական մաքրագործումի մը պէտքը կը չկաւ Ազգ. Մամուլը՝ Պատրիարքարանի համար, որու պաշտօնականութեն մէկուն՝ Հրանտ Մարգարեանի՝ անխիղճ զեղծումները կը մատնանշուին յմասնաւորապէս Նուանէսքուն կտակային խնդրոյն առթիւ գործուած և որու հետեւանօք որբերու

իրաւունք հազարաւոր ոսկիի զումար խորում է անցնելու համար մասնաւորներու կոկորզը: Տաճարի էջերը չենք ուզեր աղտոտել այդ կարգի զեղծումներու մանրամասնութիւններով: Բայց հրապարակով, յակահէ յանուանէ մատնանշուած իրողութիւնք ծանրակշիռ են, և ինչ որ տակի յաւալի է, այն յայտարարութիւնն է թէ զործումած զեղծումներուն մէջ կան այնպիսիներ, որ մեղաւորիցներու զոյութիւնն են թաղել կու տան: Այս առթիւ կը յիշուին ուրիշ անուններ ալ՝ նոյն Բաղ. Ժողովոյ անդամի և երեսփոխանի: Մենք չենք կրնար բացարձակ ստուգութիւն նկատել եղած բոլոր ամբաստանութիւնները, չենք ալ կրնար պնդել որ և է զեղծումի չգոյութիւնը: Ամէն պարագայի մէջ, ամենախիստ քննութիւն մը անհրաժեշտ է Պատրիարքարանի բոլոր ճիւղերուն մէջ, քննութիւն մը վճռական, արագ, որու արդիւնքով երեւան ելնելիք յանցապարտները պէտք է անպայման ենթարկուին օրէնքի բոլոր խտուրթներուն: Ա՛լ բաւական է որքան հետեւեցանք անուշ տեղը կապելու քաղաքականութեան, ա՛լ հերիք է խաբար, մեհաւեքը: Որքան մեծ անիրաւութիւն մը պիտի ըլլար մակերեւութային քննութեամբ, իսկ ժողովրդային հոսանքի մը կամ միայն լրագրական հրատարակութեանց ազդեցութեան տակ զատապարտել ու մէկը, թերեւ անմեղ մը, նոյնքան և աւելի մեծ անիրաւութիւն պիտի ըլլայ զեղծումները պարտկելու, խնդիրները զոցելու քաղաքականութիւնը, որմէ շատ տուժեց ազգը մինչև հիմայ:

ՀԱՅ-ՀԱՌՈՒՄԵԱԿԱՆՍՑ

ՆՈՐԸՆՏԻՐ Կ.-ՊԱՏՐԻԱՐԲԸ

Հայ հաւովանդայ նորընտիր Կ. Պատրիարք Տ. Պօղոս Ս. Թէրզեան, որ Յունիս Զին Կ. Պոլիս ժամանած էր և մեծ հանգէսով ընդունուած, Կայս. Պալատ և Դահլիճին անդամներուն (Յունիս 8) տուած առաջին այցելութեան միջոցին իսկ ցուցուց թէ իսկապէս ժողովրդասէր սիրտ

մը կը կրէ, և սկիզբը դրաւ կորովի դործունէութեան մը: Վեհ. Կայսեր ներկայութեան ընդունուելու պահուն Տ. Պօղոս Սրբազան համարձակեցաւ յայտարարել թէ՝ Երբ Ն. Վեհափառութիւն կայսր կը հրուշակուէր, անդին Առանայի մէջ ամէն ոք արցունք կը թափէր, որոնք բարաւթեան արցունքի փոխուեցան, և բոլոր տեսանք զթաախրա հայր մը, որ Օսմ. հայրենիքի գահուն վրայ կը բազմէր: Կ. Պատրիարքը, իրեն ճշմարիտ Օսմանցի հայրենասէր, դաւաճներու մէջ տիրող անապահով կացութեան և անոր պատճառներուն վրայ համարձակ յայտարարութիւններ Ըրաւ նախարարներու, և դարման պահանջեց, նոյն իսկ ընդհ. երկրին օգտին համար: Ն. Սրբազնութիւնը նմանօրինակ ուշադրաւ յայտարարութիւններ Ըրաւ վերջերս Լա Թիւրքիի մէկ խմբագրին ևս, արդարացնելով ընդհանուր Հայութեան տկուկալութիւնները և աւելցնելով ամէնուն համակրութիւնն իր վրայ:

Յունիս 13 կիրակի օր կատարուեցաւ Կաթողիկոսական օրհնութիւնը Պատրիարքանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան զեսպրաններու, ծառօթ Հայ և Հայ-հռոմէական բարձր անձնաւորութիւններու և բազմաթիւ ժողովրդական: Այս առթիւ երեւան ելած շահեկան խնդիր մը արժանի է յիշատակութեան: Հայ-հռոմէական եկեղեցականք ու մանք, նաեւ կարգ մը աշխարհականք պընդեցին թէ քանի որ իրենց բոլոր ծէսերը կը կատարուին Հայ. եկեղեցւոյ արարողութեամբ, պէտք է օծուի նաեւ Կաթողիկոսը, մինչդեռ ցարդ կատարուածը օրհնութեան կամ Եպիսկոպոսաց կողմէ ձեռնադրութեան, և քօղի ու զաւազանի նուիրման արարողութիւնն է: Ուրիշներ պնդեցին թէ Կաթողիկոսներու օծումը Հայ եկեղեցւոյ մէջ մտած է վերջին ժամանակներ ազգին քաղաքական վիճակը վերնադնէտքը, և մերթ աւելի ունեցած է և մերթ ալ չէ ունեցած: Օծման փափաքողները փառս զտնկու համար ձեռագիրներ պրպտելու հետապնդեցան, և մասնաւորապէս Մխիթարեան համակրելի վարդապետ մը՝

Հ. Սահակ Տ. Մովսէսեան՝ Դուբեան Ամեն. Ս. Պատրիարք հօր արտօնութեամբ, Ղաւթիոյ մատենադարանին ձեռագիրները աչքէ անցուց, և գտաւ 360 տարուան ձեռագիր մը որ կաթողիկոսական օծում չի յիշատակեր, այլ միայն օրհնութիւն և ձեռնադրութիւն: Բայց կան ուրիշ ձեռագիրներ ալ որոնք ունին օծման կարգը և որոնցմէ ընդօրինակուած են Էջմիածնայ և Սսոյ մէջ տպեալ օծման կարգերը: Եզրակացութիւնն այն եղաւ որ, այս անգամ ևս Հայ-հռոմէական Կ. Պատրիարքներու համար զործարարուած սովորական արարողութիւնը տեղի ունենայ, մինչև որ օծման մասին յառաջիկային Սինօդով կարգադրութիւն մ'ըլլայ:

Տաճարի խմբագրութեան կարծիքն ումանց կողմէ հարցուած ըլլալով, կը փութանք պտտասխանել թէ քանի որ ազգին զանազան հատուածներուն միջև համերաշխութեան կապերը ամրապնդելու զեղեցիկ բողձանք մը կայ, փափաքելի է որ օծման արարողութիւն կատարուէր, ճիշտ ինչպէս որ կը կատարէ այսօր Հայ եկեղեցին: Այս փափաքը կը յայտնենք համարձակօրէն, գիտնալով որ հիմնական վարդապետութեանց մաս չի կապեր, և նոյն ինքն Հռոմի քահանայապետ մը, Է. Է. Ժ. Գ. յայտնաբեր Պապը, ամէն ազատութիւն ընծայած և գրեթէ պարտադիր բրած է Արեւելք Կաթողիկ եկեղեցիներուն՝ իրենց հնաւանդ սովորութեան համաձայն կատարել ծէսերն և արարողութիւնները:

Մենք վստահ ենք թէ նորընտիր Կ. Պատրիարք Տ. Պօղոս Սրբազան պիտի գիտնայ օգտուիլ նոյնինքն Հռոմի Պապի մը այս լայնամտութենէն, ազգին բաժանեալ հատուածներուն միջև ամրապնդելու համար սիրալիր եղբայրական համերաշխութիւն ստանալու փափաքող է ինքն ալ:

Խմբագրութիւնս կը փութայ ուրեմն իր ջերմ շնորհաւորութիւնները յայտնել խոնարհաբար Ն. Սրբազնութեան և յաջորդութիւն մաղթելու ազգաչէն մտադրութիւններուն:

— 0 —

Ս. Էջմիւռի Նոր Վեհապետին հիմնարկէք կատարուեցաւ Յունիս 6ին, կի-

րակի օր, մեծ հանդիսաւորութեամբ, ի ներկայութեան Երեւանի նահանգապետին, Էջմիածնի գաւառապետին և զինուորական ու քաղաքային պաշտօնեաներու՝ հանդիսաւորան համալոգեալով, նաեւ Երեւանի թեմական Խորհուրդի, Դպրատոցի հոգաբարձութեան անդամներու, բոլորն ալ յատկապէս հրաւիրուած: Թիֆլիզէն յատուկ հրաւերով ներկայ էր Պ. Աղեքսանդր Մանթաշեանի զործակառար և ներկայացուցիչ Պ. Գէորգ Շահումեան, և նոր Վեհարանի ճարտարապետ Պ. Զօհրաբեան: Վեհ. Հայրապետին կարգադրութեամբ, որոշուած էր նոյն օր կատարել բացումը իր նախորդին՝ հանգ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի շիրմին, որուն շինութիւնն աւարտած և քանի մը օր առաջ Թիֆլիզէն բերուելով գետեզուած էր գերեզմանին վրայ, Աշտարակեցի երջանկայիշտոակ Ներսէս Կաթողիկոսի շիրմին քով: Այս պարզ բայց ճաշակաւոր շիրմին պատուանդանը կազմուած է մութ մոխրադոյն որձաքարէ (կրակիք) և կախարիչը թանձր և յղիւն սպիտակ մարմարէրէնէ, որուն վերի ճակատը բարձրաքանդակ փորագրուած են Հայրապետական նշանները՝ թագ, գաւաղան, Աւետարան ևն., նաեւ հետեւեալ արձանագրութիւնը, նոյնպէս բարձրաքանդակ. —

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԵ ՀԱՅՈՑ

ՄԿՐՏԻՉ Ա. ՎԱՆԵՑԻ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Նուագող վեցից Հայրենեաց Հայոց
Ծնեալ ի 4ի Ապրիլ ի 1820 ամ ի
Վախճանեալ ի 29 Հոկտ. ի 1907 ամ ի

Յաւաքս պատարագի հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուելէ ետքը հանգ. Հայրապետին դամբարանին վրայ, թափօրը՝ միշտ նախադասութեամբ Վեհ. Տ. Տ. Մատթէոս Սրբազան Կաթողիկոսին, Հրաւափառ շարականով՝ Տրդատոյ կոչուած աւագ դուռնէն ուղղուելու նոր Վեհարանի հիմնարկութեան վայրը: Ի վերայ վիժի հաւատոյ շարականէն և արաջած ընթերցումաներէ ետքը, Ն. Ս. Օծութիւն Վեհ. Հայրապետը, յատուկ պատրաստուած ամեն դուղէն՝ խոր փոսն իջնելով առաջին հիւննաքարը գետեզեց և չաղախով ամրացուց.

Իսկ երկրորդ քարը՝ Երեւանի կոմս Նահանգապետը, Ս. Կաթողիկոսին հրաւերով: Հիմնաքարեր դրին նաեւ Մայր Աթոռոյ միաբնակութեան անդամներէն աւագադոյն անդամներ: Հոգեւորական դասը միաբնակութեան՝ «Օրհնեսցի, լծցի եւ սրբեսցի հիմն շինութեանս այս, նշանաւ» եւն., իսկ զպիւրք՝ Ամեն ալիլուիա: Հիմնաքարի կափարիչին տակ գետեզուելու պղինձէ տախտակ մը հետեւեալ արձանագրութեամբ. —

«Յաւի տեւուն 1910 եւ Հայոց Ռեթի ի 6 ամսեանն Յունիսի, յաւուր հրաւափառ տօնի Հոգեգալստեան, ի քաղաւորութեան Նիկողայոս կայսեր հաւայն Ռուսիոյ, ի փոխարեալութեան Կովկասու կոմս Իլարիոն Իվանով իյ Վարոնցով Դաւիթի, եւ ի Հայրապետութեան Տ. Տ. Մասթէոս Բ. սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց, հիմն արկաւ Վեհարանիս, ծախիւք եւ արդեամբ բարեգործի Աղեհանդր Յ. Մանքաւեանի:»

Կրօն. պաշտամունքէն ետքը, Վեհ. Կաթողիկոսը գեղեցիկ ատենաբանութեամբ մը դրուատեց մեծանուն բարերարին՝ Աղեքսանդր Մանթաշեանի ազգասիրական եւանդը, թուեց անոր բարեգործութեանց մեծամեծ արդիւնքները՝ ի մասնաւորի Բաւրիի Հայոց Եկեղեցին, Տփլիսի նոր շինուելու վրայ եղող Ներսէսեան չքեղ դպրանոցը, որոնց վրայ պիտի աւելնայ նաեւ այս Վեհարանին շինութիւնը, որ դարուց ի դարս անոր բարեգործութեան յուշարձանը պիտի մնայ, Ն. Ս. Օծութիւնն օրհնեց բարերարին կեանքը, և Զարին և իր բարձր պաշտօնատարներուն կենաց համար մաղթանքներէ ետքը, հանդէսը փակեց Պահպանիչով:

Ի վերջոյ չքեղ հացկերոյթ՝ միաբանական սեղանատան մէջ:

Ս. ՊԱՏՐԻԱՐԻ Հայրը անցեալ կիրակի օր Պէտլիւքաւէրէի Եկեղեցին պատարագելու առթիւ ծայրագունութիւն տուաւ Արմաշական չորս վարդապետներու՝ Տ. Մահակ Օտոպաշեան, Տ. Երուանդ Բէրտաճեան, Տ. Արտաւազդ Գալէնտէրեան և Տ. Գաբրիւն Ուշատուրեան Հայրերուն: Զերմ չնորհաւորութիւններ:

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ կրթական սիրուն հանդէսով մը, նախագահութեամբ Ս. Պատրիարքին, փակեց իր տարեշրջանը, աշուն տարով 12 շրջանաւարտներ՝ լուրջ կրթութեամբ մը օժտուած: Ասոնք են՝ Պ. Պ. Գէորգ Փափազեան, Յակոբ Գրլլճեան, Գրիգոր Գալրիշեան, Մկրտիչ Պօտուրեան, Արշակ Պէկեան, Սաշա Գէորգօֆ, Տիրան Փափազեան, Կարապետ Նաւակեան, Հրանտ Գալֆանեան, Երուանդ Բէրէտէճեան, Վահան Խիւտալերեան, Խորէն Ասատուրեան: Շնորհաւորելի է վարժարանին անօրէն Օննիկ էֆ. Պէրպէրեան, որ յաջողապէս կը շարունակէ իր ոգնայեալ հօրը՝ Ուսուցչապետին սկսած արդիւնաւոր գործը:

ՍԿԻՒՏԱՐԻ ամերիկեան աղջկանց Գօլֆին 14 շրջանաւարտներէն 4ը Հայուհիներ են, օրիորդք՝ Նուարդ Պ. Աւգեր, Վարդանուշ Ալիքսանեան, Եւփիմէ Տ. Անդրէասեան: Շնորհիկ Մ. Շահնապար, Աստղյակ Օր. Վարդանուշ Ալիքսանեան անգլիերէնէ գեղեցիկ թարգմանութիւն մը գրեալ է մեզի Հոգիի Անմահութեան վրայ, զոր յառաջիկայ թիւով պիտի հրատարակենք հաճոյքով:

ՄԵՐ ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆԸ կը յայտնենք ժամանակի արտօնաւէր Տիար Բասիմի, որ յունիս 13ի կիրակի գիշեր վատագի յարձակում մը կրէր է Կէտիկ Փաշա, Պալի Փաշա զառիւղարին վրայ, երբ իր եղբոր որդիին՝ Պ. Մարտիրոսի հետ տպարանէն կը վերադառնար: Յարձակում գործող արաբածը՝ որ Բասիմի կը կրէր, զաւազանի հարուած կ'իջեցնէ Բասիմի գլխուն, կռնակէն, և հակառակ կատարուած հետապնդութեան, կ'անյայտմոյս դէպի Ինճիր Տիգրի կողմը, Նոզկանքով կը պախարակենք այս բիրտ ու վատ արարքը:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ. — Հետեւեալ հրամարտըրի պտտնէնը գրկուած է մեզ, հրատարակելու խնդրանք. —

Վսեմ. Տիար Ատենապետ

Ազգ. Ընդհ. Ժողովոյ

Խորին շնորհակալութիւնս յայտնելով հանդերձ՝ որ մարտ 30 թուականու տուած

հրամարականս չընդունուեցաւ Պատկաւելի Ժողովէդ, հարկ կ'զգամ ներկայիս երկրորդել զայն, նկատելով որ 71ի մեծամասնութիւնը անհրաժեշտ դատուած բլալուն պատճառաւ Երեսի. Ժողովոյ գումարումները մերթ ընդ մերթ ամլութեան կը դատապարտուին: Մինչդեռ հազիւ 100ի կը հասնի ներկայ Պատուարժան անդամոյ աւելցման թիւը: Մաշխէլով որ մեզ նման հին զաշարհարեւոյ յաջորդեն նոր և կորովի ուժեր՝ ի պայծառութիւն սիրեցեալ Ազգիս,

Մնամ աղօթարար

ԱՐԿԱՏԱԿԱՆ ՔՀ. ՀԻՍԱՐԵԱՆ

Սամաթիա, 16 Յունիս 1910

ՄՈՌՑՈՒՄԸ ԷՋԵՐ

ՍԻՍՈՆԱԿԱՆ ՏԵՐՏԵՐԸ

(*) Շարունակութիւն 12րդ քիւէն:

Բայց այդ ցահախն ներքեւ մայրը կ'ըսքօշէր ժամանադրական վրիպակ մը. վաղուց էր որ Պետրոս «աշուտեալ երեսնէրու հրեշտակային շնորհը կորուսած էր» ինչպէս կ'ըսէր իր բանաստեղծ եղբայրն ամէն անգամ որ կը լսէր իրենց մօր մերժումներն եղբորը համար եղած առաջարկներուն: Պետրոս քսան և եօթը տարեկան էր: Պետրոս ինքն ալ գոհ էր մօրը մերժողական պատասխաններուն, վասն զի իր պատասխանն ալ տարբեր պիտի չլլար: Միայն թէ մայր ու զաւակ տարբեր նպատակներ ունէին. երիտասարդը սրտի ամուսնութեան կը բաշճար, իսկ մայրը «մենք տեղէն աղջիկ կ'ուզէր առնել: Ահա՛ այս իր նպատակին հասնելու անհրաժեշտ պայմաններէն մին կը համարէր Շաղիկ տուտու՝ հանրա՛ յորջորջուիլ: Այլ է Շաղիկ հանրամի՛ն հարս տալ, ալ է Շաղիկ տուտուին:

Թէպէտ Շաղիկ տուտու կը համարուէր բարեբաւորիկ կին, բայց եթէ հոգեբան բժիշկ մը՝ խոնարհեցնելով աջակողմեան երեսն անոր կուրծքին՝ ականջէք սրտի տուր և առին, ներսէն հիւանդութեան բարոս՝

խում մը պիտի պատմէր նմա թէ՛ այն սիրտ կը տառապի բարոյական վէրքով մը. Շաղիկ տուտու բնու աւատ մը Եէնի-Գարուէն դուրս չէր ելած, անտի իր խոցը:

Ո՞ր բանատուղձ երբեք պիտի երգէ անճառելի այն հեշտութիւնն որ կ'ողողէ սիրտը Պելլեգի այն կնոջ, որու ընկերական վիճակը կը ծածանի միջակ և սոսորիս գոտերու միջև, երբ նա կարող է ձմեռն ըսել իր զրայիններուն:

— Օ՛ֆ, սա խառնախառն ձմեռն ալ չեղար քի գեղ մը երթայինք:

Եւ յաջորդ ձմեռը, զիւղէ վերադարձին, կը պատմէ իր զրայիններուն, ձմեռն ի բուն կը պատմէ թէ ի՞նչպէս ժամանակ անցուցին այս կամ այն գեղը, բրո՞նց հետ էին, որո՞նց հետ տեսնուեցան: Եւ հա՞րկ է ըսել որ «իրենց հետ» զիւղ գտնուող ամէն խանութպաններու զլուխներն իրեն աչքին երեւցած են փառադարդեալ ազնուականութեան ոսկեղող պատկով: Իր թաղի կիներն ամառն շողոյն գամուած միտքած իրենց տուններու մէջ, բերնեաց մոտիկ կ'ընեն անոր պատմութիւններուն, և օղաւ փոխութեան գնացող կիներ կ'զգայ թէ՛ ինքն անոնցմէ ամենէն վեր է, գերաշխարհիկ է: Շաղիկ տուտու զրկուած կը մնար այդ փառքէն, վասն զի եթէ կին էր, նաեւ մայր էր, փառաւորութիւնը զոհած էր զաւկին տնտեսական շահերուն, զի զիւղ գնացողութիւն մը տակաւին շապուութիւն կրնար համարուիլ այդ բնականիքի համար: սակայն այդ տարին Ստեփանիկ բաւական ծանր հիւանդացաւ և զարնան օղափոխութեան պէտքն անհրաժեշտ համարուեցաւ: Երբ բժիշկն արտասանեց Ստեփանիկի համար օղափոխութիւն բառը, հաւանորէն ունայնասիրութեան ողին աւելի աճկուն ըրաւ մայրական վրդովումը:

188... ի զարնան նոր կիրակին Շաղիկ տուտու, Պետրոս և Ստեփանիկ Եէնի-Գարուէն փոխադրուեցան ի Պոյաճը-զիւղ:

Գ.

Երբ կ'սկսի այս փոքրիկ պատմութիւնը, Մարանկողեանները մի քանի շաբաթէ ի վեր փոխադրուած են ի Պոյաճը-զիւղ, ուր կը վայելեն այն տեսակ մը երանութիւնը

զոր կը պարգևեն զիւղադնացութեան առաջին օրերը: Իրիկուն մը շուկայէ վերադարձին Պետրոս մինչ կ'անցնէր հանրային պարտէզէն, նշմարեյ մայրը որ կը պոքտէր ուրիշ բնականիքի մը հետ. ակնոցը գրաւ ու զխոցէ: Նոյն գիշերը սեղանին վրայ հարցուց մօրը թէ ո՞վ էին իր հետ եղողները:

— Աղէկ ֆամիլիա մըն են, պատասխանեց Շաղիկ տուտու. Խույումճեան կ'ըսուին. Պէշիքթաշէն անցած շաբթու եկան. կիրակին օրը ժամը տեսնուեցանք, սա էտէ-ւի օթոսխը կը նստին. էրկու աղապ արծիկ իլէն մարերնին էն: Ամա բէք աղէկ արծիկներ, մարերնին քիչ մը միճասրդ է անոր համար էկած էն, հար չունին:

Յաջորդ իրիկուն Պետրոս շոգեհաւէն ելլելով ծովափին վրայ երբ ճեմել սկսեց, զէմն ելան մայրն ու այդ բնականիքը կանգ առաւ. Շաղիկ տուտու ներկայացումները կատարեց:

— Պետրոս, ըսաւ, էրէկ գիշերուան հարցուցածներդ էն: Հանրմը մարերնին է, էրկու հանրմներն ալ օրիորդները:

Եւ Քույումճեաններուն զատնալով.

— Աս ալ մէնծա է, ըսաւ:

Ինչ որ կը նշանակէր թէ Շաղիկ տուտուին երկու զաւկներուն կրտսերը արդէն անոնց ծանօթ էր, և մենծին՝ վրայ խօսուած էր իրենց մէջ:

Գլխով բարեկեցին զիրար և միասին ետ դարձան պտոյտը քարափին վրայ շարունակելու:

Այս երկու աղջիկներն էին Երանիկը և մեծ քոյրը Սուրբիկ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԿՆ

(Շարունակելի)

ԱՐՏՅՆԱՏԵՐ

ՀԱՄԱՅՆԱԼ ԲՆԱԿ. ԿԵՐԵՐՃԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐՄԱՅՐ ԲՆԱԿ. ԿԵՐԵՐՃԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԷՍ ՇԻՇՄԱՆԱՆ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԱՄԻՍ ՄԷ Ի ԿԻԼԻԿԻԱ. — Գրեց Տիկ. Արեակունի Թեոդիկ. — Հեղինակուհին, որ այնքան աշխիւ զործ մը կատարեց, Կիլիկիան տրհալիքի վայրին մէջ անձամբ ստատարելու համար վերաշինութեան գործին՝ Աղգանուէր Հայուհեաց վարժարանի կողմակերպութեան հոգն ստանձնելով, այս հատորին մէջ խոստցուցած է իր ցատաղին տալստութիւնները, որք որին զրի աստուած՝ բանաստեղծական նկարուն զրչով մը: Աւելի քան 200 էջերէ բաղկացած գեղեցիկ հատոր մը, զարդարուած տեղւոյն վրայ առնուած բաղմախիւ լուսանկար պատկերներով որ կը ներկայացնեն տեղեւոր վայրերու տեսարաններ և հերոսական զէմքեր: Յուզումով, արցունքով կարդացուելիք զիրք մը, որու ընթերցումը ճշմարիտ վայելք մըն է միւսնոյն ստան: Գին 7 ու կէս զրչ. գումարներու համար 9 զրչ. Կեդրոնատեղի Տէր Կերօնեան վաճառատուն:

ՀԵԹՈՒՄ ԱՌԱՋԻՆ. — Հին Կիլիկիոյ փառքէն, ազատքէն, ողբերգութիւն երեք հանդէսով. Գրեց Գրիգոր Մ. Թեղալեան: Գին 3 զրչ.: Կեդրոնատեղի Ա. Պ. Եաղճեան և Լնի. Սիւնեաց զրատունը Պաղըրլար, Սուլթան Համամ, Կ. Պոլիս:

ՄԱՆԻՍԱՆԱՆ ՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒԵԱՐՀԱՐՅՈՅՈՒԹԻՒՆ. — Գրեց Յովհաննէս Քաղանճեան: Իր ուշադրութեամբ պարունակութեամբ և հոգեբանական վերլուծութեամբով արժանի ամէն դրադարաններու մէջ գանուելու: Գին 6 զրչ.

ՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԱՅ ՄԵՆՍԱՏՈՒՆՆԵՐՈՒ 1400-1900. — Հմուտից գործ մ. Գ. Մամբեան էֆ. Գին 10 զրչ.

ՆՊԻՊՐ ՓԱՃԱ. — Ֆրանսացի գրողի մը՝ Էմիլ Պէթրանի ձեռքերն և տարաւոր

բութիւնները՝ Հայ մեծանուն քաղաքագէտին վրայ Հայերէնի վերածած է ծանօթ գրող մը, Մեսրոպ էֆ. Նուպարեան անգամ նոյն գերգաստանի, որ ընտանեկան շահեկան մանրամասնութիւններով և քաղաքական պարագաներով ալ ճոխացուցած է դործը, զարդարուած հոյր և սրգի Նուպար փաշաներու զեղատիպ պատկերներով: Գին 5 զրչ.

ԴԻՍԱԼՈՐ ԵՐԸ. — Ժողովրդային պատմութիւն բոլոր գիտաւորներու: Գին 5 զրչ.

ԿԱԻԷ ԱՐՁԱՆՆԵՐ. — Յ. Յանրիկեան: Գրեց Արամ Անտոնեան: Գին 7 ու կէս զրչ.

ԱՌՁԻՌՆ ՖՐՅՆԱՍՏԱՅՈՒՆ ԲԱՌԱՐԱՆԱՆԱՐՀԻ, Մ. Նուպարեան էֆ. Ի. (Մաժլոյ տակ), Բաժանորդագրութիւն (կաղմեղ, Պոլսոյ համար 2) զրչ.: Գաւառացի 25 զրչ.: Սրտատահման 5 ու կէս Քր.:

ԽՈՒՆՆԻ ԵՒ ԱՐՑՈՒՆՔ. — Բանաստեղծական սիրուն հատոր մը նորընծայ բանաստեղծէ մը՝ Արամ Գաղանճեանէ, որ — ինչպէս կը գրէ Տիար Գաղիկ Շահեան յառաջարանական գրութեան մը մէջ — Ժամանակակից կարգ մը բանաստեղծներու նման սիրային թրթռումներ չէ որ կը բերէ մեղի, այլ հոն կայ սիր, աղօթք, հոյ կեանքին լացը, բողոքն ու երգը: Ներդրածիտ քաջալերութեամբ արժանի կը գաննէք նորընծայ բանաստեղծը, որու առաջին քայլերը զոգտել ու վաւորանալու են անշուշտ:

Հատորիկը տալագրուած է Մարդուտն, Ներս. Արատեան տղարանին մէջ, այնպիսի մաքրութեամբ մը որ պատիւ պիտի բերէր Պոլսոյ ու է տղարանի մը իսկ: Գին 4 զրչ.: Կեդրոնատեղի Եաղճեան զրատուն: Սուլթան Համամ Պաղըրլար:

Գին 40 Փարա